

Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն

Ծրագրի համարը՝ 42145
Հուլիս-դեկտեմբեր 2016թ.

**Հայաստան: Հյուսիս-Հարավ Ճանապարհային Միջանցքի Ներդրումային Ծրագիր
Տրանշ 1 և Տրանշ 2
(Ֆինանսավորվում է ԱԶԲ-ի կողմից)**

Կազմվել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» (ՕԻԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության (ՈՈԱԿ) կողմից՝ հիմնվելով Ծրագրի կառավարման խորհրդատուի (ՕԿԻ) բնապահպանական մշտադիտարկման ամսական հաշվետվությունների վրա:

Բովանդակություն

Մաս I Ներածություն	Error! Bookmark not defined.
1. Շինարարական աշխատանքները և Ծրագրի զարգացումը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	Error! Bookmark not defined.
1.1 Մ1 Թալին-Գյումրի ճանապարհի Թալին-Լանջիկ ճանապարհահատված (կմ 71+500-կմ 90+200):).....	8
1.2 Հյուսիս-Հարավ ճանապարհային Միջանցքի 9 ուղեանցերի վերակառուցում/կառուցում/վերանորոգում (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհ)	9
2. Բնապահպանական անվտանգության համակարգի աշխատակազմ	Error! Bookmark not defined.
2.2 ԾԻԿ արտաքին ազդեցության և վերաբնակեցման բաժին	Error! Bookmark not defined.
2.3 Թալին-Լանջիկ ճանապարհով զբաղվող բաժին.....	Error! Bookmark not defined.
2.3.1 Խորհրդատուի Բնապահպանական անվտանգության համակարգի բաժին.....	10
2.3.2 Կապալառուի Առողջապահության և անվտանգության, բնապահպանության, հնագիտության և սոցիալական հարցերի բաժին	10
2.4 9 ուղեանցեր (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհ)	Error! Bookmark not defined.
2.4.1 Կապալառուի Առողջապահության և անվտանգության, բնապահպանության, սոցիալական հարցերով աշխատակազմ.....	11
Մաս II Բնապահպանական Կառավարում	Error! Bookmark not defined.
3. Բնապահպանական Անվտանգության Համակարգի Ծրագիր	Error! Bookmark not defined.
3.1 Համապատասխանություն Ազգային Անվտանգության Համակարգի հետ	13
3.2 Համապատասխանություն ԱԶԲ Անվտանգության Համակարգի հետ.....	Error! Bookmark not defined.
3.3 Կապալառուի համապատասխանությունը ՇՄԿՊ-ի հետ	Error! Bookmark not defined.
3.4 Քարհանքերի, շինարարական թափոնների կուտակման վայրերի, պայթեցման աշխատանքների, հանված նյութի և բնահողի կուտակման վայրերի, բետոնի գործարանների և պատմական հուշարձանների համար տեղանքին բնորոշ բնապահպանական կառավարման պլանների հաստատումներ	15
9 ուղեանցեր (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհ).....	12
3.5 ԱԶԲ աուղիտի առաքելություն	13

3.6	Վերապատրաստման դասընթացներ և իրազեկվածության բարձրացման ուղղվածություն	
	Error! Bookmark not defined.	
3.6.2	9 ուղեանցեր (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհ).....	13
3.7	Հնագիտական աշխատանքների ծրագիր (Թալին-Լանջիկ ճանապարհահատված).....	Error!
	Bookmark not defined.	
3.8	Բողոքների լուծման մեխանիզմ և խորհրդատվություն	Error! Bookmark not defined.
3.8.2.2	9 ուղեանցեր (Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհ)	16
3.9	Կապ.....	Error! Bookmark not defined.
	Մաս III Բնապահպանական մոնիթորինգ	Error! Bookmark not defined.
4.	Մոնիթորինգ.....	Error! Bookmark not defined.
4.2	ՇՄԿՊ-ի հետ համապատասխանության մոնիթորինգ	Error! Bookmark not defined.
4.3	Սարքավորումներով չափումներ և օդի որակի, աղմուկի և վիբրացիայի, ջրի որակի բնապահպանական պարամետրերի մոնիտորինգ Թալին-Լանջիկ ճանապարհահատվածում.	
	Error! Bookmark not defined.	
4.4	Անհամապատասխանության ծանուցումներ	Error! Bookmark not defined.
4.5	Եզրակացություններ և առաջարկություններ	Error! Bookmark not defined.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տեղադրման վայրերի կարգավիճակը Տրանշ 2-ում

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. Հնագիտական պեղումների կարգավիճակը ներկայացնող աղյուսակ

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. Հաշվետու ժամանակաշրջանում մոնիթորինգ այցերի ընթացքում հայտնաբերված անհամապատասխանություններ

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. Հաշվետու ժամանակաշրջանում աղմուկի, փոշու, ջրի որակի և վիբրացիայի չափումների կարգավիճակ 2016թվականի հուլիս-դեկտեմբերին

ՀԱՎԵԼՎԱԾ Ե. Բնապահպանական թույլտվությունների և լիցենզիաների կարգավիճակ

ՀԱՎԵԼՎԱԾ Զ. Աղմուկի, փոշու և վիբրացիայի գնահատման հաշվետվությունից քաղվածքներ

ՀԱՎԵԼՎԱԾ Է. ՀՀ մշակույթի նախարարության հաստատումը և համայնքի հավանությունը Ներքին-Սասնաշեն մուտքի նոր ժամանակավոր գրունտային ճանապարհի վերաբերյալ

ՀԱՎԵԼՎԱԾ Ը. Հետշինարարական բնապահպանական աուդիտի ստուգաթերթիկ Տրանշ 1-ի համար

Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական Ջարգացման Բանկ
ԿՇՄԿՊ	Կապալառուի Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՆԲԳ	Նախնական բնապահպանական գնահատում
ԲՄՄ	Բնապահպանության միջազգային մասնագետ
ԲՄ	Բնապահպանության մասնագետ
ԾԿԽԿ	Ծրագրի կառավարման խորհրդատու կազմակերպություն
ԾԻԿ	Ծրագրի իրականացման կազմակերպություն
ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ՏԿՏՏՆ	ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՄՆ	ՀՀ մշակույթի նախարարություն
ՏՇՄԿՊ	Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլան
ԵԿՊ	Երթևեկության կառավարման պլան
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն

Մաս I Ներածություն

Սույն Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությունն ընդգրկում է 2016թ-ի հուլիսից դեկտեմբեր ժամանակահատվածը:

Հաշվետվությունը պատրաստվել է Ծրագրի կառավարման և վերահսկողության խորհրդատուի (ՄԿԽ) հետ սերտ համագործակցությամբ, որը ֆրանսիական «Սաֆեժ» և իսպանական «Էպտիսա» ընկերությունների համատեղ ձեռնարկությունն է Տրանշ 1 և Տրանշ 2 համար:

1. Հայաստանի Հանրապետությունը ընտրել է Բավրա-Երևան-Ագարակ երթուղին որպես հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, որը պետք է վերականգնվի, վերակառուցվի և լայնացվի, և աշխատանքների համակարգող է նշանակել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (ՏԿՏՏՆ) «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» ԾԻԿ ՊՈԱԿ-ին (ՀՀՃԾ ԾԻԿ ՊՈԱԿ): Ծրագիրը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից Բազմափուլ ֆինասավորման գործիքի շրջանակներում (ԲՖԳ):

2. ԲՖԳ շրջանակներում նախատեսված է վերականգնել և բարելավել հյուսիսից հարավ ձգվող ազգային նշանակության ճանապարհները՝ ստեղծելով նոր ընդլայնված Հյուսիս-Հարավ մայրուղի: Հիմնական նպատակն է՝ ընդլայնել առկա երկուղի ճանապարհները (հիմնականում ոչ բարվոք վիճակում)՝ հնարավորության դեպքում վերածելով դրանք քառուղի ճանապարհների գոյություն ունեցող ծրագծերի երկայնքով կամ կառուցելով նոր այլընտրանքային երկուղի ճանապարհներ այն հատվածներում, որտեղ մեկ քառուղի ճանապարհը հնարավոր չի լինի կառուցել:

3. Տրանշ 1 Ծրագրի նպատակն է՝ բարելավել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի երկու ճանապարհահատված, մասնավորապես Մ1 հատվածը հյուսիսից՝ Երևանից դեպի Աշտարակ, կմ18+370-կմ29+773 (Կապալառուի հետ պայմանագրում Հատված 3) և Մ2 հատվածը հարավից՝ Երևանից դեպի Արարատ, կմ9+321-կմ47+400 (Կապալառուի հետ պայմանագրում Հատված 2):

4. Տրանշ 2-ը սկսվում է Աշտարակում կմ 29+600 և ավարտվում՝ Թալինի մոտ կմ 71+500 (Կապալառուի հետ պայմանագրում Հատված 1): Ագարակում կկառուցվի երկու շրջանցիկ ճանապարհ՝ կմ29+934-կմ32+600, և Ուջանում՝ կմ36+600-կմ40+300: Ծրագիրը կունենա նաև նոր ճանապարհի ծրագիծ Կաթնաղբյուրում (8.95կմ)՝ 59+950-կմ68+900, որը գտնվում է գոյություն ունեցող մայրուղու ձախ կողմում՝ միանալով Թալինի գոյություն ունեցող ծրագծին:



Պատկեր 1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք, Տրանշ 1 և Տրանշ 2

1. Շինարարական աշխատանքները և Շրագրի առաջընացը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում

1.1 Տրանշ1, Մ2 Երևան-Արարատ ճանապարհահատված (կմ 9+312-կմ28+900) և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհահատված (կմ 18+370-կմ29+773).

Տրանշ 1 շինարարական աշխատանքները ընդհանուր առմամբ ավարտվել են: Տրանշ 1 Հանձնման-ընդունման ակտը ստորագրել են ՀՀ ՏԿՏՏՆ-ը, ԾԿԽ/Բնժեները և Կապալառուին 2016թ. հունիսի 16-ին: Ներկայումս Տրանշ 1-ի աշխատանքները մինչև 2017թ. հունիսի 16-ը գտնվում են Թերությունների վերացման ժամանակաշրջանում: Կապալառուին շարունակում է աշխատանքներ իրականացնել, որոնք մասնակիորեն վերաբերում են Մ2 Երևան-Արարատ ճանապարհահատվածում (կմ9+312-կմ28+900) և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհահատվածում (կմ 18+370-կմ 29+773): Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Կորսան Կորվիան Կոնստրուկայոն» Էս.Ա. ընկերության հայաստանյան մասնաճյուղը:

Իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝ բետոնյա ծածկի վերանորոգում, ճանապարհի վրա առկա ճաքերի սրակում, լրացուցիչ արգելափակոցների տեղադրում, հավաքովի ջրահեռացման տարրերի վերանորոգման աշխատանքներ:

Անվտանգության/ապահովության միջոցառումներ՝ այս ժամանակահատվածում աշխատանքները ներառել են երթևեկության կարգավորման նշանների/ազդանշանների տեղադրում, ճանապարհների գծանշում և ճանապարհների պահպանման աշխատանքների իրականացում:

1.2 ***Տրանշ 2. Մ1 Աշտարակ-Թային ճանապարհ (կմ29+600-կմ71+500)***

Շինարարական աշխատանքները իրականացնում է «Կորսան Կորվիամ Կոնստրուկայոն» Էս.Ա. ընկերության հայաստանյան մասնաճյուղը և հետևյալ ենթակապալառուները՝ «Ա.Ա.Բ», «Ռաֆայել», «Ապարագ», «Բետոնիկա», «Դենտալ Իմփորտ», «Հիդրոէներգետիկա», «Իսոլյուքս Կորսան», «Մերգերյանշին», «Միրանդա», «ԷմԷլԷլ Մայնինգ» կազմակերպությունները:

Իրականացվել են հետևյալ շինարարական աշխատանքները՝ լիցք, հանույթ, ժայռային ապարների քանդում, մաքրում և արմատահանում, ջրահեռացման կառուցվածքների կառուցում, երկաթբետոնյա հավաքովի տարրերի պատրաստում, երկաթբետոնյա բլոկների և ջրատարների տարրերի տեղադրում, հիմքի և ենթահիմքի նյութերի տեղադրում, կողնակների կառուցում և բետոնապատման աշխատանքեր: Զգուշացնող նշաններ են տեղադրվել հողի բերրի շերտի և հանված ոչ պիտանի նյութերի տեղադրման վայրերի մոտ:

Անվտանգության/ապահովության միջոցառումներ՝ այս ժամանակահատվածում աշխատանքները ներառել են բետոնյա բլոկների և երթևեկության կարգավորման նշանների/ազդանշանների տեղադրում ու ճանապարհների պահպանման աշխատանքների իրականացում:


2. Շրջակա միջավայրի անվտանգության մեխանիզմի ապահովման աշխատակազմ

Ծրագրի իրականացման կազմակերպությունը կատարում է ծրագրի իրականացման կառավարում օրական կտրվածքով: ԾԻԿ-ը ներառում է Սոցիալական և բնապահպանական բաժին, որի պատասխանատվությունների թվում են ծրագրի բոլոր բնապահպանական հարցերի կառավարումը:

Ծրագրի կառավարման խորհրդատուն/Ինժեները ԾԻԿ-ին տրամադրում է Տեխնիկական աջակցություն՝ ծրագրի կառավարման և հաշվետվողականության հարցերում: ԾԿԽ-ի Շրջակա միջավայրի անվտանգության բաժինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության՝ բնապահպանական և հնագիտական ազդեցության

տեսանկյունից, և մասնավորապես, Կապալառուի կողմից ՇՄԿՊ-ի իրականացման վերահսկման և հաշվետվողականության համար:

Շինարարական աշխատանքները իրականացնում է կապալառուն: Կապալառուի բնապահպանության բաժինը պատասխանատու է ԿՇՄԿՊ-ի և ՏՇՄԿՊ-ի մշակման և իրականացման, շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվողականության համար:



2.1 ԾԻԿ արտաքին ազդեցության և վերաբնակեցման բաժին

Արտաքին ազդեցության և վերաբնակեցման աշխատանքները ստանձնել են արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողը, Սոց. անվտանգության մասնագետը և Բնապահպանության մասնագետները:

Գևորգ Աֆյան - Արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողը պատասխանատու է ծրագրի բնապահպանական, վերաբնակեցման և սոցիալ կառավարման համար:

Մոնա Պողոսյան - Սոց. անվտանգության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը:

Մարիամ Բաղեյան - Բնապահպանության և հնագիտության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ-ի Բնապահպանության քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը: Աշխատում է կես դրույքով:

Տիգրան Օգանեզով - Բնապահպանության և հնագիտության մասնագետը պատասխանատու է Ծրագրի համապատասխանության համար ԱԶԲ Բնապահպանության քաղաքականությանը, ԵՆԲ-ի Բնապահպանության քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը: Աշխատում է կես դրույքով:

2.2 ԾԿԽ Բնապահպանական անվտանգության բաժին

Ներկայումս ԾԿԽ Բնապահպանական անվտանգության բաժնի կազմում ընդգրկված են՝

Էդիտա Վարդգեսյանը՝ Բնապահպանության ազգային մասնագետը (ԲՄ) ստանձնել է ճանապարհահատվածի բնապահպանությանն/առողջությանն/անվտանգությանն առնչվող հարցերի ընդհանուր կառավարման պատասխանատվությունը: Ծառայությունների մատուցման պայմանագրի Փոփոխման կարգադրագիր թիվ 6-ի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել է ԲՄ-ի ծառայությունների մատուցման 33 օր՝ 11 օր օգոստոս ամսվա մեջ, 11 օր հոկտեմբեր ամսվա մեջ և 11 օր դեկտեմբեր ամսվա մեջ: ԲՄ-ը համաձայնել է ԾԿԽ-ի հետ վերաբաշխել իր աշխատաժամանակը ու իրականացնել անհրաժեշտ հանձնարարականները հուլիսից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Բորիս Գասպարյանը՝ Հնագիտության ազգային մասնագետը (ՀԱՄ) պատասխանատու է ճանապարհահատվածում առկա հնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվության, շինարարական աշխատանքների և Հայաստանի հնագիտությանը վերաբերող օրենսդրության միջև փոխհամապատասխանության, հանք կատարված ստուգայցերի, հանված նյութերի տեղադրման և բետոնի գործարանի տարածքների համար՝ հնագիտական գնահատման նպատակներից ելնելով: Ծառայությունների մատուցման պայմանագրի Փոփոխման կարգադրագիր թիվ 6-ի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանում նախատեսվել է ՀԱՄ-ի ծառայությունների մատուցման 33 օր՝ 11 օր հուլիս ամսվա մեջ, 11 օր օգոստոս ամսվա մեջ և 11 օր սեպտեմբեր ամսվա մեջ: Նա ԾԿԽ-ի հետ համաձայնության է եկել իրականացնել մնացած հնագիտական պեղումները Ներքին Սասնաշեն Էնելուիթ բնակավայրում, ինչպես նաև այլ խնդիրներ՝ լրացնել բոլոր խնդիրները կապված Տրանշ 2 հնագիտության հետ նույնիսկ նախատեսված ներդրումների ժամանակահատվածից հետո:

Զարլգ Ադամսոնը՝ Բնապահպանության միջազգային մասնագետը (ԲՄՄ) պատասխանատու է բնապահպանական անվտանգության հարցերում միջազգային լավագույն փորձի վերաբերյալ խորհրդատվության համար: Հաշվետու ժամանակաշրջանում նա աշխատանք չի իրականացրել:

Կարեն Առաքելյան՝ Ճանապարհների, առողջապահության և անվտանգության մասնագետ (ՃԱԱՄ), պատասխանատու է շինարարական գործողությունները ՇՄԱԳ և ՇՄԿՊ-ում սահմանված առողջապահության և անվտանգության միջոցառումներին համապատասխան վերահսկելու և մոնիթորինգի համար:

2.3 Կապալառուի Բնապահպանության բաժին

Կապալառուի Բնապահպանության բաժինը կազմված է 4 անդամներից՝

Գոնսալո Գասկոն Ռամոս՝ Որակի և Բնապահպանության հարցերով ղեկավար, պատասխանատու է Բնապահպանական բաժնի ընդհանուր կառավարման համար:

Վիկտոր Բախտամյան՝ Բնապահպանության մասնագետ, աջակցում է Որակի և

Բնապահպանության հարցերով ղեկավարին շրջակա միջավայրի կառավարման պլանի իրականացումն ապահովելու համար:

Մոս Ամիրխանյան՝ Սոցիալական կապերի մասնագետ, պատասխանատու է սոցիալական հարցերին առնչվող Կապալառուի գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը:

Պատրիսիա Օրտեգա Գոնսալես՝ Առողջապահության և անվտանգության ղեկավար, պատասխանատու է առողջապահության և անվտանգության հարցերին առնչվող Կապալառուի գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը:

Մաս II Բնապահպանական կառավարում

3. Բնապահպանական անվտանգության համակարգի մեխանիզմների ծրագիր

3.1 Համապատասխանություն ազգային անվտանգության համակարգի հետ

3.1.1 Ազգային անվտանգության համակարգի և ազգային օրենսդրության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով՝ Կապալառուն ձեռք է բերել շինարարական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ թույլտվություններ և լիցենզիաներ, որոնց ցանկը ներկայացված է Հավելված Ե-ում:

3.1.2 Հաշվետու ժամանակաշրջանում շինարարությունը համապատասխանում է բոլոր ազգային բնապահպանական օրենքներին և կանոնակարգերին:

3.1.3 Որպես ակտիվ բնապահպանական գործողություններ իրականացնող տնտեսվարող սուբյեկտ, կապալառուն ՀՀ ԲՆ-ին պարբերաբար ներկայացնում է բնապահպանական եռամսյակային հաշվետվություններ՝ ՀՀ օրենսդրության համաձայն: 2016թ-ի երրորդ եռամսյակի համար եռամսյակային հաշվետվությունը Կապալառուն ներկայացրել է հաշվետու ժամանակահատվածում:

3.1.4 Հողի բերրի շերտի կուտակման վայրերի շահագործումը իրականացվում է ՀՀ գործող օրենքներին և կանոնակարգերին՝ մասնավորապես, ՀՀ Հողային Օրենսգրքին, ՀՀ Կառավարության No 1396-N և No 1026-N որոշումներին համապատասխան:

3.1.5 Բնապահպանական պարամետրերի՝ փոշու, ջրի, աղմուկի և վիբրացիայի թույլատրելի շեմերը մոնիթորինգի համար հաստատված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներով և նորմերով:

3.1.6 Կապալառուն անհրաժեշտ կապ է ապահովում տեղական (համայնքներ) և տարածքային կառավարման մարմինների (մարզեր) հետ՝ շինարարության ընթացքում համապատասխանելու համար ՀՀ օրենսդրությանը և թույլտվություններ ու հաստատումներ է ձեռք բերում ցանկացած տարածքի օգտագործման և ճանապարհներով տեղափոխման համար, ինչպես նաև հանված նյութերի տեղադրման տեղամասերի կամ գործարանների համար:

3.2 Համապատասխանություն ԱԶԲ Անվտանգության Համակարգի հետ

3.2.1 Որպեսզի շինարարական աշխատանքներն իրականացվեն շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցությամբ, պահանջվել է, որ շինարարության իրականացումը համապատասխանի ՇՄԿՊ-ի պահանջներին, որը մշակվել էր ԱԶԲ Բնապահպանական քաղաքականության և ՀՀ օրենսդրության համապատասխան:

3.2.2 Նախքան հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տեղադրման համար որևէ տեղամասի շահագործումը Աշտարակ-Թալին Մ1 ճանապարհին Տրանշ 2՝ Կապալառուի կողմից պատրաստվում է Տեղանքին բնորոշ Շրջակա միջավայրի կառավարման պլան (ՏՇՄԿՊ), որը ներառում է տեղանքին բնորոշ բնապահպանական ազդեցություններ, ռիսկի գնահատում և մեղմացուցիչ միջոցառումներ՝ ուղղորդվելով ԱԶԲ Կենտրոնական և Արևմտյան Ասիայի վարչության անվտանգության բաժնի կողմից մշակված Բնապահպանական անվտանգության տեղեկատուով: Ընդունվել են հետևյալ ընթացակարգերը 1. Կապալառուն ընտրում է հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տեղադրման համար տեղամաս, 2. Խորհրդատուի ԲՄ և ՀՄ մասնագետները այցելում են տեղամասը և տրամադրում Կապալառուին տեղանքի գնահատման հաշվետվություն տեղամասի օգտագործման սահմանված զգայուն ընկալիչներով և առաջարկներով, 3. Կապալառուն ապահովում է տեղամասը և պատրաստում է ՏՇՄԿՊ՝ հիմք ընդունելով գնահատման հաշվետվության արդյունքները և ներկայացնում է Խորհրդատուի հաստատմանը, 4. Խորհրդատուի ԲՄ-ը վերանայում է ՏՇՄԿՊ և Խորհրդատուն տրամադրում է հաստատում, 5. Կապալառուին տրվում է տեղամասը շահագործելու թույլտվություն:

3.2.3 Քանի որ Տրանշ 2 հանդիսանում է Ա կատեգորիայի ծրագիր, ԱԶԲ-ը շարունակում է իրականացնել ուսումնասիրության առաքելություններ առնվազն յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» գործողությունների համապատասխանությունը ԱԶԲ անվտանգության մեխանիզմների քաղաքականության (2009թ.) պահանջների հետ ստուգելու նպատակով: Տրանշ 1 ճանապարհահատվածների հետշինարարական բնապահպանական աուդիտը իրականացվել է 2016թ. Հուլիսի 8-ին: Տրանշ 2 միջնաժամկետ Ծրագրի իրականացման մոնիթորինգի բնապահպանական վերջնական հաշվետվությունն (ՄԻՄԲՀ) կազմվել է: ԱԶԲ առաքելությունը իրականացրել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 2 վարկի միջոցների ուսումնասիրություններ 2016թ. օգոստոսի 2-ին և 2016թ. հոկտեմբերի 21-ին: Այցելությունների ընթացքում ուսումնասիրվել է բնապահպանական համապատասխանությունը:

3.3 Կապալառուի համապատասխանությունը ՇՄԿՊ-ի հետ

3.3.1 Բնապահպանական հարցերի իրականացումն ապահովելու համար Կապալառուն ուղղորդվում է Տրանշ 2-ի ՇՄԱԳ-ով և ՇՄԿՊ-ով, որպես Սրցույթի և Պայմանագրի փաստաթղթերի բաղկացուցիչ մաս, ինչպես նաև ԿՇՄԿՊ-ով, որը մշակվել է վերջինիս

կողմից և մանրամասնում է շինհրապարակի բնապահպանական կառավարման պահանջների իրականացումը և կառավարումը, մասնավորապես՝ շինարարության ազդեցության մեղմացում, մոնիթորինգ և հաշվետվողականության պահանջներ: ՇՄԿՊ-ի հետ համապատասխանությունը պարբերաբար մոնիթորինգի է ենթարկվում և ներկայացվում է հաշվետվություն (տես Մաս III Բնապահպանական Մոնիթորինգ):

3.3.2 Նախքան շինարարության մեկնարկը Կապալառուն Ծրագրի ազդեցության ենթակա համայնքներում իրականացրել է հանրային լսումներ՝ տեղեկատվության տարածման և հանրության մասնակցության վերաբերյալ ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականության պահանջների (2009թ.) հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

3.4 Հանքերի, պայթեցման աշխատանքների, հանված անօգտագործելի նյութի տեղադրման և հողի բերրի շերտի կուտակման վայրերի, բետոնի գործարանների և պատմական հուշարձանների համար տեղանքին բնորոշ բնապահպանական կառավարման պլանների հաստատումներ

3.4.1 Բնապահպանության մասնագետի և Հնագիտության մասնագետի կողմից իրականացվել են այցելություններ դեպի Կապալառուի կողմից առաջարկվող տեղամաս՝ Ներքին-Մասնաշեն համայնքում մուտքի նոր ժամանակավոր գրունտային ճանապարհի կառուցման տեղամասը գնահատելու նպատակով: Գնահատման հաշվետվության մեջ նշվել է, որ չկան էական բնապահպանական և հնագիտական խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել տեղամասի օգտագործումը առաջարկվող նպատակների համար, հաշվի առնելով, որ տեղամասի օգտագործումը միայն ժամանակավոր է ճանապարհի շինարարության ընթացքում: Այնուամենայնիվ, ձեռք է բերվել ՀՀ մշակույթի նախարարության հաստատումը և նախատեսվել են մեղմացման միջոցառումներ՝ մոտակայքում գտնվող հնագիտական արժեքները վնասներից պաշտպանելու նպատակով: Ինչպես նաև ձեռք է բերվել Ներքին Մասնաշեն համայնքի ղեկավարի համաձայնությունը: ՀՀ մշակույթի նախարարության հաստատումը և համայնքապետի համաձայնությունը ներկայացված են Հավելված Ը-ում:

3.4.2 Հաշվետու ժամանակահատվածում Ինժեները հաստատել է պայթեցման աշխատանքների ԿՇՄԿՊ-ը, որոնք իրականացվել են կմ 54+300-կմ54+400, կմ58+000-կմ58+400, կմ61+500-կմ62+100, կմ64+150-կմ66+350 և կմ68+300-կմ68+500 ճանապարհահատվածներում: ԾԿԽ-ն ուսումնասիրել է կմ56+050-կմ56+300 ճանապարհահատվածի պայթեցման աշխատանքների ԿՇՄԿՊ-ը և վերադարձրել է վերանայման:

3.4.3 Թալին-3 հանված անօգտագործելի նյութի տեղադրման վայրի (կմ68+400) Կապալառուի Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլանը հաստատվել է ԾԿԽ-ի կողմից:

3.4.4 Հողի բերրի շերտի կուտակման բոլոր վայրերի շահագործումը դադարեցված է: Կապալառուն իրականացրել է մաքրման աշխատանքներ կմ37+500-կմ38+000, կմ38+000-

կմ38+500 ճանապարհահատվածներում: Հանված նյութերը ժամանակավորապես կուտակվել են լցակայաններում լաբորատոր փորձարկումներ կատարելու համար՝ որոշելու հողի հանված բերրի շերտը տեղափոխել հողի բերրի շերտի կուտակման վայր, թե հանված նյութերի տեղադրման վայր:

3.4.5 Տեղամասերից մի քանիսը Կապալառուն օգտագործել է այնպիսի նպատակների համար, որոնք նշված չեն եղել համապատասխան ԿՇՄԿՊ-ում. Կապալառուն Կաթնաղբյուր-2 հողի բերրի շերտի կուտակման վայրի մոտ (կմ51+550) առանձնացրել է հողի կուտակման վայր, ինչը նշված չէր ԿՇՄԿՊ-ում, Կաթնաղբյուր-4 հանված նյութերի տեղադրման վայրում՝ մեծ քարերի և ժայռաբեկորների կուտակման վայր, Ներքին Բազմաբերդ-2 հանված նյութերի տեղադրման վայրում՝ ճանապարհների աշխատող մեքենասարքավորումների ժամանակավոր կայանատեղի մինչև դրանք իրենց սեփականատերերին հանձնելը: Կապալառուից պահանջվել է կատարել համապատասխան փոփոխություններ ՏՇՄԿՊ-ում:

3.4.6 Կատարվել են այցելություններ դեպի Աղցք համայնք Կապալառուի կողմից առաջարկվող տեղամասը հանված հողի և ժայռանյութերի կուտակման վայր դարձնելու համար: Կապալառուին տրամադրվել է գնահատման հաշվետվություն:

3.4.7 Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն տեղադրել է տեղեկատվական և անվտանգության վահանակներ հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութի տեղադրման բոլոր վայրերում: Կապալառուն գնել է նյութը գոյություն ունեցող հանքերից և չի բացել որևէ նոր հանք:

3.4.8 Հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութի տեղադրման վայրերի ՏՇՄԿՊ-ի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները տրամադրվում են աշխատանքների առաջընթացի մասին ամսական հաշվետվություններում: Ոչ մի տեղամաս Կապալառուի կողմից չի հայտարարվել փակված: Հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի կուտակման վայրերի կարգավիճակը և դրանց շահագործման համար մշակված ՏՇՄԿՊ-երը 2017թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են Հավելված Ա-ում:

3.5. ԱԶԲ Առաքելություն

3.5.1 ԱԶԲ Աուդիտի առաքելությունները տեղի ունեցան 2016թ. օգոստոսի 2-ին և 2016թ. հոկտեմբերի 21-ին Ծրագրի Տրանշ 2 գործունեությունը ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի (2009) պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակով: Առաջին առաքելության մեջ ներգրավված էր ԱԶԲ-ի բնապահպանության ավագ մասնագետը, իսկ երկրորդ առաքելության մեջ՝ ԱԶԲ բնապահպանության ազգային խորհրդատուն: Երկու առաքելությունների այցելություններին մասնակցել են ԾԻԿ-ի, ԾԿԽ/Ինժեների, ինչպես նաև Կապալառուի ներկայացուցիչները: Այցելությունների ընթացքում Տրանշ 2 շինարարական աշխատանքները ընդհանուր առմամբ համապատասխանել են ԱԶԲ Անվտանգության

մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի պահանջներին: ԾԿԽ-ին խորհուրդ է տրվել Տրանշ 2 հնագիտական արժեք չպարունակելու մասին վկայականները կցել վերջին հաշվետու ժամանակահատվածի Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությանը, ինչը համապատասխանաբար կատարվել է: Ինչպես նաև առաջարկություն է արվել բարելավել բետոնի գործարանի դրենաժային համակարգը, ինչը նույնպես կատարվել է:

3.6. Տրանշ 1 ճանապարհահատվածների հետշինարարական բնապահպանական աուդիտ

3.6.1 Տրանշ 1 ճանապարհահատվածների հետշինարարական բնապահպանական աուդիտը տեղի է ունեցել 2016թ. հուլիսի 8-ին: Աուդիտի առաքելության մեջ ներգրավված էին ԱԶԲ-ի բնապահպանության մասնագետը, ԾԻԿ Արտաքին ազդեցության և վերաբնակեցման համակարգողը, ԾԻԿ բնապահպանության մասնագետը, Ինժեների ԲՄ-ը և Կապալառուի բնապահպանության հարցերով զբաղվող աշխատանքային խումբը: Աուդիտի առաքելությունը այցելեց Երևան-Արարատ և Երևան-Աշտարակ ճանապարհահատվածները, Մասիսի հանված նյութերի կուտակման վայրը, Մասիս քաղաքի բետոնի գործարանի տարածքը, Փարպիի բետոնի գործարանի տարածքը և Աշտարակ-1 և Աշտարակ-2 հանված նյութերի կուտակման վայրերը: Մեկ այլ այցելություն տեղի է ունեցել օգոստոսին՝ ստուգելու հետշինարարական բնապահպանական աուդիտի ընթացքում հայտնաբերված թերությունների շտկումը: Աուդիտի առաքելությունը հաստատեց, որ շինարարական աշխատանքները կատարվել են ՇՄԿՊ-ում նշված բոլոր պայմաններին համապատասխան և բավարար կերպով՝ Երևան-Արարատ և Երևան-Աշտարակ ճանապարհահատվածներում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունից խուսափելու կամ այն նվազագույնի հասցնելու նպատակով: Աշխատանքների ավարտման ստուգաթերթիկը ներկայացված է Հավելված Զ-ում:

3.7. Վերապատրաստման դասընթացներ և իրազեկվածության բարձրացման ուղղվածություն

3.7.1 Մոնիթորինգ այցերի ընթացում ԾԿԽ աշխատակազմի հետ պարբերաբար իրականացվել են իրազեկվածության բարձրացման քննարկումներ ԱԶԲ-ի բնապահպանական անվտանգության պահանջների և հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տղադրման վայրերի շահագործման վերաբերյալ:

3.7.2 2016թ. դեկտեմբերի 1-ին Կապալառուն կազմակերպել է դասընթաց շինհրապարակում առողջության և անվտանգության և ԿՇՄԿՊ պահանջների վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում ներգրավված «Ա.Ա.Բ», «Ռաֆայել», «Ապարագ», «Բետոնիկա», «Դենտալ Իմփորտ», «Հիդրոէներգետիկա», «Իսոյուքս Կորսան», «Մերդերյանշին», «Միրանդա», «ԷմԷԷԼ Մայնինգ» կազմակերպությունների բոլոր աշխատողները մասնակցել են վերապատրաստման դասընթացին:

3.7.3 Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուի և ենթակապալառուների աշխատողների համար հնագիտական պատահական գտածոների ընթացակարգի վերաբերյալ դասընթացներ չեն իրականացվել, այն պատճառով, որ շինարարական աշխատանքներ չեն իրականացվել հնագիտական տեսակետից զգայուն տարածքներում:

3.8 Հնագիտական պեղումների ծրագիր

3.8.1 Ներքին Սասնաշենում հնագիտական պեղումների աշխատանքները ավարտվել են: ՀՀ մշակույթի նախարարությունից ստացվել է կմ59+000-կմ59+220 հատվածում շրջանցիկ ճանապարհի շինարարական աշխատանքներ սկսելու վերաբերյալ թույլտվություն՝ պայմանով, որ շրջանցիկ ճանապարհը ժամանակավոր է և օտարման շերտի աջ կողմում գտնվող ժամանակավոր շրջանցիկ ճանապարհի կառուցման համար օգտագործվող շին. նյութերը կհեռացվեն շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո, ինչպես նաև շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն հնագիտության փորձագետի վերահսկողությամբ:

3.8.2 Հնագիտական պեղումներ են իրականացվել Ագարակի պատմամշակութային տարածքում, կմ32+750-կմ33+400 ճանապարհահատվածում: Հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվել են ամրոցի պատի մի հատված, որը թվագրվում է մ.թ.ա. II Հազարամյակի առաջին կեսին և վաղ միջնադարյան կառույցներ, որոնց տեղափոխումը չի թույլատրվում՝ ըստ ՀՀ մշակույթի նախարարությունից ստացված պարզաբանման: Հետևաբար, անհրաժեշտ է իրականացնել կմ32+750-կմ33+400 ճանապարհահատվածի վերանախագծում, որը պետք է հաստատվի ՀՀ մշակույթի նախարարության կողմից՝ մշակութային հուշարձանի վրա որևէ բացասական ազդեցությունից խուսափելու համար: Փոփոխված նախագծի արդյունքում ամենայն հավանականությամբ կփոխվի ճանապարհահատվածում գոյություն ունեցող ՀՕՏ ազդեցությունները և կբացահայտվեն ազդեցության ենթակա նոր անձինք: Ներկայումս նախագծային ընկերությունների հետ տեղի են ունենում վերոնշյալ հարցի հետ կապված բանակցություններ:

3.8.3 Դավթաշեն համայնքում կմ63+600 հատվածում ստորգետնյա ջրթող խողովակի կառուցման համար անհրաժեշտ է բացել շրջանցիկ ճանապարհ: Շրջանցիկ ճանապարհի տարածքը անցնում է հնագիտական պեղումների իրականացման տարածքով՝ հայտնաբերվել են կառույցի պատեր, բնակության վայրի և դամբարանների մասունքներ, և այդ տարածքը գրանցվել է Հնագիտական պեղումների պլանում որպես հնագիտական տեսակետից զգայուն տարածք: Հնագիտական պեղումները իրականացվել են, և այդ տարածքը հայտարարվել է հնագիտական տեսակետից ազատ տարածք:

3.8.4 Որևէ շինարարական աշխատանք չի իրականացվել հնագիտական տեսակետից զգայուն այլ տարածքների շրջակայքում: Հնագիտական պեղումների պլանով սահմանված հնագիտական բոլոր պեղումները ավարտված են:

3.8.5 Հնագիտական պեղումների կարգավիճակը 2016թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ներկայացված է Հավելված Բ-ում:

3.9 Բողոքների լուծման մեխանիզմ և խորհրդատվություն

3.9.1 Հիմնվել է Բողոքների լուծման մեխանիզմ՝ անդրադառնալաու համար նորմայից բարձր քանակով փոշու, աղմուկի, թափոնների ոչ ճիշտ կուտակման և բնապահպանական այլ հարցերին, որը ներկայացված է Տրանշ 2-ի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեջ: Բողոքների լուծման մեխանիզմը լրացնում է առկա նամակների կամ անձնական դիմումների միջոցով դիմելու մեխանիզմներին, որը հիմնվել է տեղական իշխանությունների կողից:

Բողոքների ընթացակարգը և դրանց լուծման մեխանիզմի փուլերը ներկայացված են պատկեր 2-ում:

պաստառներ, որոնք պարունակում են կոնտակտային տվյալներ, որոնցով կարելի է դիմել խախտումների դեպքում: Կապալառուի՝ սոցիալական կապերի մասնագետ Սոս Ամիրխանյանը պատասխանատու է ծրագրի գործունեությանը վերաբերող դժգոհություններին անդրադառնալու համար: Վերջինիս հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և անունը նշված են պաստառների վրա: Ներկա դրությամբ որևէ բողոք և/կամ առաջարկ բնապահպանական հարցերի վերաբերյալ չի գրանցվել:

3.9.3 Հաշվետու ժամանակաշրջանում Կապալառուն նախքան շինարարության մեկնարկը կազմակերպել է հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված հանդիպումներ Ուջան համայնքում 2016թ. սեպտեմբերի 6-ին, Աղձք համայնքում՝ 2016թ. սեպտեմբերի 8-ին, Ագարակ համայնքում՝ 2016թ. սեպտեմբերի 20-ին և Փարպի համայնքում՝ 2016թ. հոկտեմբերի 18-ին: Այդ հանդիպումների նպատակն էր՝ տեղեկացնել ծրագրի ազդեցության ենթակա համայնքների անդամներին շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության մասին: Հանրությանը ներկայացվեցին նախատեսված շինարարական աշխատանքները, դրանցից բխող շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը, իրականացվելիք մեղմացուցիչ միջոցառումները և բողոքների լուծման մեխանիզմը: Յուրաքանչյուր ազդեցության ենթակա համայնքի համայնքապետի գրասենյակում պահվում է բողոքների գրանցամատյան, որը հասանելի է համայնքի անդամների համար: Նաև յուրաքանչյուր համայնքում փակցված են պաստառներ, որոնք պարունակում են կոնտակտային տվյալներ, որոնցով կարելի է դիմել խախտումների դեպքում: Նշվեց, որ պատճառված անհարմարությունները ժամանակավոր բնույթ են կրում: Հողի բերրի շերտի կուտակման և հանված անօգտագործելի նյութերի տեղադրման վայրերի հարցերը քննարկվեցին համայնքապետի և համայնքի այլ ներկայացուցիչների հետ: Հանրության հետ հանդիպումների ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները ներկայացված են Կապալառուի 2016թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների սոցիալական հարցերի վերաբերյալ ամսական հաշվետվության մեջ:



3.9.4 Շինարարական աշխատանքների հետ կապված որևէ բողոք և/կամ առաջարկ բնապահպանական հարցերի վերաբերյալ չի գրանցվել:

3.10 Կապ

Հաշվետու ժամանակաշրջանում կապը ԾԻԿ, ԾԿԽ և Կապալառուի բնապահպանական խմբի հետ իրականացվել է պաշտոնական գրությունների և էլեկտրոնային նամակագրության, հեռախոսազանգերի և հանդիպումների միջոցով: Մասնավորապես, բարձրացվել և քննարկվել են հետևյալ հարցերը.

- ԱԶԲ առաքելության այցելություն,
- ԱԶԲ հետշինարարական աուդիտի առաքելության արդյունքները Տրանշ 1 վերաբերյալ և աուդիտի ստուգման ցուցակի ավարտ,
- Տրանշ 1 Ծրագրի իրականացման մոնիթորինգի բնապահպանական վերջնական հաշվետվություն (ԾԻՄԲՀ) և Տրանշ 2 միջնաժամկետ ԾԻՄԲՀ ,
- ՏՇՄԿՊ-ի մշակման աշխատանքների ընթացքը և պայթեցման գործողությունների համար շինարարության կազմակերպման նախագիծ,
- Տրանշ 2 Կապալառուի իրականացրած աշխատանքների համապատասխանությունը ՏՇՄԿՊ-ի հետ,
- Փոշու, աղմուկի և վիբրացիայի սարքավորումներով/գործիքային չափումներ,
- Մոնիթորինգ այցերի արդյունքները և դրանց շտկումների կատարման ընթացքը,
- Հողի բերրի շերտի կուտակման վայրի կառավարում կմ37+500-կմ38+00, կմ38+000-կմ38+500 հատվածներում,
- Մասիսի բետոնի գործարանի ամապոնտաժման աշխատանքների ընթացքը,
- Ծառերի տնկման գործընթացի մեկնարկ: Կապալառուից պահանջվել է ներկայացնել ծառերի տնկման պլան՝ իր ժամանակացույցով և ծառերի տնկման վայրերով,
- Հողի բերրի շերտի նոր կուտակման և հանված նյութերի տեղադրման վայրերի գնահատում, կապալառուի և ենթակապալառուների բոլոր հին և նոր նշանակված աշխատողների համար լրացուցիչ վերապատրաստման դասընթացի կազմակերպում,
- Տալին-1 հողի բերրի շերտի կուտակման վայրում կուտակված շինարարական աղբի հեռացում,
- Նոր բուժաշխատողի նշանակում,
- այլ ընթացիկ հարցեր:

Մաս III Բնապահպանական մոնիթորինգ

4 Մոնիթորինգ

Հաշվետու ժամանակահատվածում մոնիթորինգ է իրականացվել ըստ մոնիթորինգի ծրագրի, որը մշակվել է՝ հիմք ընդունելով ԱԶԲ անվտանգության մեխանիզմների քաղաքականության և ՇՄԿՊ պահանջները: ԾԻԿ/ԾԿԽ Մոնիթորինգի ծրագիրը ներառում է:

- (1) Կանոնավոր մոնիթորինգ այցեր ամսական կտրվածքով՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների համապատասխանությունը Տրանշ 2 ՇՄԿՊ-ի պահանջներին, ինչպես նաև հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութի տեղադրման մոնիթորինգ;
- (2) Չծրագրված ստուգողական այցեր, անհրաժեշտության դեպքում;
- (3) Աղմուկի և վիբրացիայի, ջրի, օդի որակի բնապահպանական մոնիթորինգ և գործիքային չափումներ;
- (4) Մոնիթորինգի ստուգաթերթիկի լրացում և համապատասխանությունների ու անհամապատասխանությունների ամփոփում;
- (5) Անհամապատասխանության ծանուցումների ներկայացում Կապալառուին;
- (6) Մոնիթորինգի տվյալների հավաքագրում և դրանց տրամադրումը ԾԿՄՀ-ին
- (7) Կապալառուի շաբաթական մոնիթորինգի հաշվետվությունների վերանայում:

4.1 Տրանշ 2-ի ճանապարհի ՇՄԿՊ-ի հետ համապատասխանության մոնիթորինգ (Աշտարակ-Թալին ճանապարհահատված)

Իրականացվել են մոնիտորինգի պարբերաբար այցեր:

4.1.1 Հայտնաբերված անհամապատասխանությունները հետևյալն են.

- Որոշ տեղամասեր օգտագործվել են այնպիսի նպատակների համար, որոնք նշված չեն ԲՇՄԿՊ-ում, և համապատասխան փոփոխություններ ԲՇՄԿՊ-ում չեն կատարվել,
- ճանապարհներին աշխատող մեքենասարքավորումները կայանված են Ներքին Բազմաբերդ-2 հանված նյութի տեղադրման վայրում, որոնք պետք է հանձնվեն իրենց սեփականատերերին,
- օտարման շերտից դուրս անթույլատրելի տարածքում մեքենասարքավորումների կայանման պրակտիկա,
- հողով գերբեռնված անձածկ բեռնատարները մուտք են գործել փողոց,
- փոշու և ցեխի տարածումն կանխարգելող միջոցառումներ, ինչպիսիք են կոպճային շերտի ոչ բավարար իրականացում,
- առաջին բուժօգնության կոմպլեկտի և կրակմարիչի բացակայություն,
- Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի (ԱԻԱՊ) բացակայություն:

4.2 Բնապահպանական պարամետրեր՝ օդի որակի, աղմուկի և վիբրացիայի, ջրի որակի սարքավորումներով չափումներ և մոնիթորինգ

4.2.1 Ելակետային տվյալների հավաքագրում: Կապալառուն ավարտել է փոշու, աղմուկի և վիբրացիայի վերաբերյալ ելակետային տվյալների հավաքագրումը 2014թ.-ին:

4.2.2 Ընթացիկ չափումներ և մոնիթորինգ

Հաշվետու ժամանակահատվածի հուլիսից հոկտեմբեր ընկած շրջանում փոշու, աղմուկի, ջրի և վիբրացիայի մոնիթորինգի չափումները չեն իրականացվել խիստ սահմանափակ շինարարական աշխատանքների պատճառով: Այնուամենայնիվ, ԾԿԽ պահանջել է Կապալառուից չափումները իրականացնել 2016թ. նոյեմբեր ամսին, և Կապալառուն կատարել է չափումները 2016թ. նոյեմբերի 15-ին: Անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով չափումները կրկին ժամանակավորապես դադարեցվել են դեկտեմբեր ամսին: Ըստ սարքավորումներով/գործիքային մոնիթորինգ իրականացնելու վերաբերյալ հաստատված պլանի՝ չափումների կարգավիճակը ներկայացված է Հավելված Դ-ում:

4.3 ԾԿՄՀ ցուցանիշները

Հաշվետու ժամանակաշրջանի համար Բնապահպանական կատարողականի հետևյալ ցուցանիշները ներառվելու են ԾԿՄՀ –ի մեջ:

4.3.1 Եռամսյակային կտրվածքով բնապահպանական ծանուցումների թիվը ԾԿԽ-ից Կապալառուին ըստ կոյուղաջրերի, աղմուկի, փոշու և վիբրացիայի ստանդարտների, ինչպես նաև ՇՄԱԳ-ի և ՇՄԿՊ-ի ցանկացած խախտումների վերաբերյալ, որոնք պարբերաբար չափվում են ԾԿԽ-ի կամ Կապալառուի կողմից ԾԿԽ վերահսկողությամբ կազմում է 1 անհամապատասխանության ծանուցում: Հաշվետու ժամանակահատվածի վերջում չլուծված ծանուցումներ չեն գրանցվել:

4.3.2 Եռամսյակային կտրվածքով բնապահպանական թեմաներով համայքներից ստացված բողոքների թիվը Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի համար 2013թ-ից մինչև 2016թ. ըստ Կապալառուի գրանցումների (ստուգված ԾԿԽ-ի կողմից)՝ 0 է, այսինքն՝ հաշվետու ժամանակահատվածում բնապահպանական հարցերին առնչվող բողոքներ չեն ստացվել և չեն գրանցվել:

4.4 Անհամապատասխանության ծանուցումներ

4.4.1 Կապալառուին տրամադրվել է մեկ անհամապատասխանության ծանուցում 2016թ. հոկտեմբերի 7-ին: Կապալառուն ծանուցվել է ՇՄԱԳ/ՇՄԿՊ-ում առկա հետևյալ անհամապատասխանության մասին.

- Հանված հողի ոչ ճիշտ կառավարում կմ37+500-կմ38+500 ճանապարհահատվածում
- Առանց ծանուցելու տեղամասի օգտագործում կմ49+000-կմ57+700 ճանապարհահատվածում

- Պայմանագրային պարտավորությունների անտեսում և փոշու, աղմուկի, վիբրացիայի և ջրի որակի պլանի համաձայն սարքավորումներով/գործիքային չափումների չիրականացում
- Շաբաթվա կտրվածքով մոնիթորինգ այցերի ոչ պատշաճ իրականացում
- Մոնիթորինգի հաշվետվություններում ներկայացված այլ անհամապատասխանություններ:

4.4.2 Անհամապատասխանության ծանուցման հետ կապված իրավիճակը շտկելու նպատակով Կապալառուն իրականացրել է ստորև նշված աշխատանքները.

- Հանված հողի ոչ ճիշտ կառավարում. Կապալառուն ծանուցել է ԾԿԽ հողի բերրի շերտի ժամանակավոր կուտակման վայրի համար առաջարկվող տեղամասի մասին:
- Առանց ծանուցելու տեղամասի օգտագործում. ի պատասխան ԾԿԽ անհամապատասխանության ծանուցմանը, Կապալառուն տեղեկացրել է, որ Կապալառուն տեղանքը չի օգտագործում և ներկայացրել է «Համլետ-Ռոբերտ» ՍՊԸ-ի հետ կնքված հող գնելու վերաբերյալ պայմանագիրը:
- սարքավորումներով/գործիքային չափումների չիրականացում. Կապալառուն իրականացրել է սարքավորումներով/գործիքային չափումներ:
- Շաբաթվա կտրվածքով մոնիթորինգ այցերի ոչ պատշաճ իրականացում. Կապալառուն ներկայացրել է չներկայացված շաբաթական հաշվետվությունը:
- Մոնիթորինգի հաշվետվություններում ներկայացված այլ անհամապատասխանություններ. 2016թ. նոյեմբերին Կապալառուն հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տեղադրման բոլոր վայրերում տեղադրել է տեղեկատվական և անվտանգության վահանակներ/ ցուցանակներ, ինչպես նաև իրականացրել է բնապահպանական և առողջության ու անվտանգության մեխանիզմների վերաբերյալ վերապատրաստման դասընթաց 2016թ. դեկտեմբեր ամսին:

4.4.3 Հաշվետու ժամանակաշրջանում հողի, ջրային ռեսուրսների, կենդանական և բուսական աշխարհի որևէ աղտոտում չի նկատվել շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում:

Եզրակացություններ և առաջարկություններ

4.4.4 Հաշվետու ժամանակատվածում ապահովվել է Ծրագրի գործողությունների համապատասխանությունը ազգային օրենսդրության հետ, ինչպես օրինակ Կապալառուի բնապահպանական հաշվետվությունները պարբերաբար ներկայացվել են ՀՀ ԲՆ-ը ըստ ՀՀ օրենսդրության՝ երրորդ եռամսյակային հաշվետվությունը 2016թ-ի համար, տեղական (համայնքներ) և տարածքային կառավարման մարմինների (մարզերի) հետ անհրաժեշտ ողջ

հաղորդակցումը և թույլտվություններն ու հաստատումները տարածքի և ճանապարհների ցանկացած օգտագործման համար: ((3.1.1- 3.1.3):

4.4.5 Ապահովվել է նաև ԱԶԲ բնապահպանական հարցերի անվտանգության հետ համապատասխանությունը, ինչպես օրինակ՝ Կապալառուի շրջակա միջավայրի կառավարման պլանները, Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլանները, որոնք պարունակում են տեղանքին բնորոշ բնապահպանական ազդեցությունների նույնականացումը, ռիսկի գնահատումը և մեղմացնող գործողությունները՝ ըստ ԱԶԲ ԱՄՔ հայտարարագրի պահանջների (2009թ.), որոնք վերաբերում են տեղեկատվության հրապարակմանը և հանրության մասնակցությանը: ԱԶԲ-ը իրականացրել է ուսումնասիրության առաքելություններ՝ ստուգելու Ծրագրի աշխատանքների համապատասխանությունը (3.2.1-3.3.2):

4.4.6 Իրականացվել են բնապահպանական և հնագիտական գնահատման այցելություններ դեպի այն տարածք, որտեղ կառուցվելու է Ներքին-Սասնաշենի համայնք մուտքի նոր ժամանակավոր գրունտային ճանապարհը և հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տեղադրման վայրեր: Գնահատման հաշվետվություններում նշվել է, որ չկան էական բնապահպանական և հնագիտական խնդիրներ: Թալին-3 հանված նյութերի կուտակման վայրի (կմ68+400) ՏՇՄԿՊ-ը հաստատվել է: Հողի բերրի շերտի կուտակման բոլոր վայրերի շահագործումը դադարեցված է: Հանված նյութերը ժամանակավորապես կուտակվել են լցակույտերում լաբորատոր փորձարկումներ կատարելու համար՝ որոշելու հողի հանված բերրի շերտը տեղափոխել հողի բերրի շերտի կուտակման վայր, թե հանված նյութերի տեղադրման վայր: Կապալառուից պահանջել են կատարել համապատասխան փոփոխություններ ՏՇՄԿՊ-ում, եթե որևէ տեղամաս Կապալառուն օգտագործել է ՏՇՄԿՊ-ում չնշված նպատակների համար: Հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութի տեղադրման բոլոր վայրերում Կապալառուն տեղադրել է տեղեկատվական և անվտանգության վահանակներ: Կապալառուն գնել է նյութը գոյություն ունեցող հանքերից և չի բացել որևէ նոր հանք (3.4.1-3.4.8):

4.4.7 ԱԶԲ Աուդիտի առաքելության այցելության ընթացքում կատարվել է Բնապահպանության անվտանգության մեխանիզմների ուսումնասիրություն: Հաշվի են առնվել բոլոր առաջարկությունները: Տեղի է ունեցել Տրանշ 1-ի ճանապարհահատվածների հետշինարարական բնապահպանական սուդիտ: Աուդիտի առաքելությունը հաստատել է, որ շինարարական աշխատանքները կատարվել են ՇՄԿՊ-ում նշված բոլոր պայմաններին համապատասխան և բավարար կերպով (3.5.1-3.6.1):

4.4.8 Իրականացվել են իրազեկվածության բարձրացման քննարկումներ ԱԶԲ-ի բնապահպանական անվտանգության պահանջների, այդ թվում՝ հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութերի տեղադրման վայրերի շահագործման վերաբերյալ: Կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց շինհրապարակում առողջության և անվտանգության և ԿՇՄԿՊ պահանջների վերաբերյալ: Հնագիտական պատահական գտածոների ընթացակարգի վերաբերյալ դասընթացներ չեն իրականացվել (3.7.1-3.7.3):

4.4.9 Ներքին Մասնաշենում և Դավթաշենում հնագիտական պեղումների աշխատանքները ավարտվել են: Որևէ շինարարական աշխատանք չի իրականացվել հնագիտական տեսակետից զգայուն այլ տարածքների շրջակայքում: Հնագիտական պեղումների պլանով սահմանված հնագիտական բոլոր պեղումները ավարտված են (3.8.1-3.8.5):

4.4.10 Բոլոր համայնքներում հիմնվել է բողոքների լուծման մեխանիզմ: Ազդեցության ենթակա համայնքների հետ տեղի են ունեցել հետշինարարական հարցերով հանրային լուումներ և հաղորդակցման կանոնավոր հանդիպումներ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջում որևէ բողոք և/կամ առաջարկ չի գրանցվել բնապահպանական հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են նորմայից բարձր քանակի փոշու, աղմուկի, հանված հողի և նյութերի ոչ ճիշտ կուտակումներ և այլն (3.9.1-3.9.4):

4.4.11 Ծրագրի հետ առնչվող հարցերը կանոնավոր կերպով լուծվել են ԾԿԽ-ի և Կապալառուի բնապահպանության մասնագետների միջև հաղորդակցության միջոցով (3.10):

4.4.12 Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մոնիթորինգ, ներառյալ կանոնավոր մոնիթորինգի այցեր ամսական կտրվածքով ստուգելու համար շինարարական աշխատանքների համապատասխանությունը Տրանշ 2 ԿՇՄԿՊ-ի պահանջների հետ: Փոշու, աղմուկի, ջրի և վիբրացիայի գործիքային չափումները իրականացվել են նոյեմբեր ամսին: Հաշվետու ժամանակահատվածի հուլիսից հոկտեմբեր ընկած շրջանում փոշու, աղմուկի, ջրի և վիբրացիայի մոնիտորինգի չափումները չեն իրականացվել խիստ սահմանափակ շինարարական աշխատանքների պատճառով: Մոնիթորինգի տվյալները գրանցվել են ԾԿՄՀ-ում: Հաշվետու ժամանակաշրջանում տամադրվել է 1 բնապահպանական անհամապատասխանության ծանուցում: Մոնիթորինգի տվյալները արձանագրվել են ԾԿՄՀ-ում (4.1.1-4.4.3):

4.4.13 Մոնիտորինգի այցելությունների ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունները արտացոլվել են մոնիտորինգի ստուգաթերթիկներում: Դրանցից որոշ մասը շտկվել է անմիջապես կամ շտկման համար սահմանված ժամկետի ընթացքում: Որոշ անհամապատասխանություններ շտկվել են մասամբ: Այն անհամապատասխանությունները, որոնք չեն ուղղվի գործողությունների շտկման համար սահմանված ժամանակահատվածում, գալիք եռամսյակին Կապալառուին կտրամադրվի անհամապատասխանության ծանուցում:

Գործողությունների պլան 2017թ. հունվարից հունիս հաշվետու ժամանակահատվածի համար

N	Գործողություն	Ժամանակահատված	Պատասխանատու մարմին
1.	Կապալառուի բնապահպանական թիմին խորհրդատվության տրամադրում ԱԶԲ անվտանգության մեխանիզմների քաղաքականության հայտարարագրի վերաբերյալ	Յուրաքանչյուր ամիս հունվարից հունիս 2017թ.	ԾԿԽ
2.	Կապալառուի բնապահպանության մասնագետներին խորհրդատվության տրամադրում ՀՀ բնապահպանական օրենքների պահանջների վերաբերյալ	Յուրաքանչյուր ամիս հունվարից հունիս 2017թ.	ԾԿԽ
3.	Գնահատող այցեր և աջակցություն Կապալառուին Տրանշ 2 բերրի հողի կուտակման և հանված նյութի տեղադրման վայրերի համար ՏՇՄԿՊ-ի մշակման և այլ աշխատանքային փաստաթղթերի գործընթացում	Ըստ Կապալառուի պահանջի	ԾԻԿ / ԾԿԽ
4.	ՏՇՄԿՊ-ի պատրաստում և հաստատում բերրի հողի կուտակման և հանված նյութի տեղադրման վայրերի և պայթեցման աշխատանքների հատվածների համար	Անհրաժեշտության դեպքում	ԾԻԿ / ԾԿԽ Կապալառու
5.	Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն ներառող և անվտանգության զգուշացման ցուցանակների տեղադրում ճանապարհային հատվածներում, բոլոր բերրի հողի կուտակման և հանված նյութի տեղադրման վայրերում:	Կմեկնարկի նոր ճանապարհային հատվածի կառուցման ժամանակ և կատեղծվի բերրի հողի կուտակման և հանված նյութի տեղադրման նոր վայր:	ԾԿԽ/ Կապալառու
6.	Տրանշ 1 հետշինարարական աուդիտ	2017թ. հունիսին աշխատանքների ավարտից հետո	ԾԻԿ / ԾԿԽ Կապալառու
7.	Նորանշանակ անձնակազմի համար պարբերական իրազեկման կողմնորոշիչ դասընթացներ	Ըստ անհրաժեշտության	ԾԿԽ / Կապալառու
8.	Ագարակի հնագիտական պեղումների տարածքի մոտ գտնվող ճանապարհի ծրագծի վերանախագծում	Ապրիլ-հունիս 2017թ.	ԾԻԿ
9.	Շինարարական մոնիտորինգի ծրագրի արդյունքների վերանայում փոշու, աղմուկի, ջրի որակի և վիբրացիայի	Յուրաքանչյուր ամիս 2017թ. հունվար-հունիսի	ԾԿԽ

	չափումների տեսանկյունից:		
10.	Մոնիտորինգի ենթարկել Կապալառուի կողմից կատարված շինարարական աշխատանքները՝ ՇՄԿՊ-ի, ԿՇՄԿՊ-ի և ՏՇՄԿՊ-ի պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու համար	Մինչև յուրաքանչյուր ամսվա ավարտը	ԾԻԿ / ԾԿԽ
11.	Բնապահպանական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հավաքագրում և տրամադրում ԾԿՄՀ:	Մինչև 2017թ մարտի վերջ և հունիսի վերջ	ԾԻԿ / ԾԿԽ
12.	Պատահական գտածոների գործընթացի իրականացում շինարարության ընթացքում հնագիտական արտեֆակտների հայտնաբերման դեպքում:	Անհրաժեշտության դեպքում	ԾԻԿ/ԾԿԽ/ Կապալառու
13.	ԲԼՄ-ի վերանայում և լուծում	Յուրաքանչյուր ամսվա վերջ	ԾԻԿ / ԾԿԽ
14.	Այլ ընթացիկ հարցեր, ինչպիսիք են՝ չնախատեսված այցեր շինհրապարակներ, հայտնաբերված թերությունների վերացման հսկում, վերանախագծումների գնահատում բնապահպանական տեսանկյունից, ծառերի հատման կառավարում, Կապալառուի փաստաթղթերի վերանայում և հաստատում և այլն	Անհրաժեշտության դեպքում	ԾԻԿ / ԾԿԽ
15.	Բնապահպանական անվտանգության երաշխիքների վերաբերյալ հաշվետվություն	Ամսական, կիսամյակային	ԾԻԿ / ԾԿԽ

**ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Հողի բերրի շերտի կուտակման և հանված նյութի տեղադրման վայրերի
կարգավիճակ Տրանշ 2-ում**

No	Տեղամասի անվանում	Նպատակ	Հաստատված ՏՇՄԿՊ (Այո/Ոչ)	Շահագործման կարգավիճակ
1	Կաթնաղբյուր-1	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
2	Կաթնաղբյուր -2	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
3	Կաթնաղբյուր -3	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
4	Կաթնաղբյուր -4	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
6	Կաթնաղբյուր -5	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
7.1	Եղնիկ 1	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
7.2	Եղնիկ 2	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Չի շահագործվում
8	Թալին-1	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
9	Թալին -2	Հանված նյութի տեղադրման վայր	No	Չի շահագործվում
10	Թալին -3	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
11	Ներքին Բազմաբերդ-1	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
12	Ներքին Բազմաբերդ-2	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
13	Ներքին Բազմաբերդ-3	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
14	Ներքին Բազմաբերդ-4	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
15	Դավթաշեն-1	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
16	Դավթաշեն- 2	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
17	Դավթաշեն- 3	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
18	Առուճ- 1	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Շահագործվում է
19	Առուճ - 2	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Չի շահագործվում
20	Վերին Սասնաշեն-1	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է

		տեղադրման վայր		
21	Վերին Սասնաշեն-2	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
22	Կոշ-1	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Չի շահագործվում
23	Կոշ-2	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Չի շահագործվում
24	Կոշ-3	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Չի շահագործվում
25	Շամիրամ-1	Հողի բերրի շերտի կուտակման վայր	Ոչ	Չի շահագործվում
26	Շամիրամ-2	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
27	Կաքավաձոր -1	Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Շահագործվում է
28	Փարպի-1	Հանված նյութի տեղադրման վայր	Ոչ	Չի շահագործվում

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. Հնագիտական պեղումների կարգավիճակը ներկայացնող աղյուսակ

	Համայնք	Տեղամասի անվանումը	Պեղումներ իրականացնող կազմակերպություն	Կնքված Պայմանագիր	Աշխատանքների կարգավիճակ
1	Փարպի	Ներքին Նավեր	ՀՀ ՄՆ ՊՄԺԳԿ	Այո	Ավարտվել է
2	Ագարակ	Ագարակի պատմամշակութային արգելոց	ԳԱԱ-ի ՀԱԻ	Այո	Ավարտվել է
3	Աղձք	Աղձք -1 դամբարանադաշտ	ՀՀ ՄՆ ՊՄԺԳԿ	Այո	Ավարտվել է
4	Արուճ	Արուճի հնագիտական համալիր	-	Այո	Ավարտվել է
5	Ագարակ (Թալին)	Հելլենիստական քաղաքի ավերակներ	-	Ոչ	Հնագիտական հանույթների անհրաժեշտություն չկա ճանապարհային հանգույցի վերանախագծման հետևանքով
6	Կաքավաձոր	Կաքավաձորի դամբարանադաշտ	ՀՀ ՄՆ ՊՄԺԳԿ	Այո	Ավարտվել է
7	Ներքին Բազմաբերդ	Ներքին Բազմաբերդ դամբարանադաշտ	ՀՀ ՄՆ ՊՄԺԳԿ	Այո	Ավարտվել է
8	Վերին և Ներքին Սասնաշեն	Սասնաշեն հնագիտական համալիր	ՀՀ ՄՆ ՊՄԺԳԿ	Այո	Ավարտվել է Հայտնաբերվել է նոր հնագիտական վայր Ներքին Սասնաշենում
9	Ներքին Սասնաշեն (նոր հայտնաբերված հնագիտական վայր)	Սասնաշեն հնագիտական համալիր	ՀՀ ՄՆ ՊՄԺԳԿ	Այո	Ավարտվել է
9	Դավթաշեն	Դավթաշեն հնագիտական համալիր	ԳԱԱ-ի ՀԱԻ	Այո	Ավարտվել է
10	Կաթնաղբյուր	Կաթնաղբյուր հնագիտական համալիր	ԳԱԱ-ի ՀԱԻ	Այո	Ավարտվել է
11	Թալին	Թալինի դամբարանադաշտ	ԳԱԱ-ի ՀԱԻ	Այո	Ավարտվել է

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. Հաշվետու ժամանակաշրջանում մոնիթորինգ այցերի ընթացքում հայտնաբերված անհամապատասխանություններ

N	Տվյալներ	Պահանջ	Մինչ օրս կատարված գործողություն	Պահանջվող գործողություն/ դիտողություն
1.	Տեղամասերից մի քանիսը օգտագործվել են ՏՇՄԿՊ-ում չնշված նպատակների համար և ՏՇՄԿՊ-ում փոփոխություն չի կատարվել	Թարմացնել ՏՇՄԿՊ և ավելացնել այլ նպատակների համար օգտագործված տեղամասերը	Մասամբ շտկվել է	Թարմացնել ՏՇՄԿՊ և ավելացնել այլ նպատակների համար օգտագործված տեղամասերը
2.	Ներքին Բազմաբերդ-2 հանված նյութի տեղադրման վայրում կայանել են մեքենասարքավորումներ, որոնք պետք է հանձնվեն իրենց սեփականատերերին	Հեռացնել մեքենասարքավորումները հանված նյութի տեղադրման վայրի տարածքից	Շտկվել է	Հետագա գործողություններ չեն պահանջվում
3.	Օտարման շերտից դուրս անթույլատրելի տարածքում մեքենասարքավորումների կայանման պրակտիկա	Մեքենասարքավորումները անհրաժեշտ է կայանել օտարման շերտի սահմաններում կամ թույլատրելի այլ տարածքում	Զի շտկվել	Կապալառուն պետք է հետևի ցուցումներին, այլապես կտրամադրվի անհամապատասխանության ծանուցում
4.	Փոշու և ցեխի տարածումն կանխարգելող միջոցառումներ, օրինակ՝ կոպճային շերտի ոչ բավարար իրականացում	Տեղադրել կոպճային շերտ ընդհանուր օտագործման ճանապարհի յուրաքանչյուր մուտքի դիմաց	Մասամբ շտկվել է	Կապալառուն պետք է հետևի ցուցումներին, այլապես կտրամադրվի անհամապատասխանության ծանուցում
5.	Հողով գերբեռնված անձածկ բեռնատարները մուտք են գործել փողոցներ	Հողով գերբեռնված բեռնատարները, որոնք մուտք են գործում փողոց, պետք է ծածկված լինեն	Մասամբ շտկվել է	Զթույլատրել անձածկ բեռնատարների մուտքը փողոցներ
6.	Առաջին բուժօգնության կոմպլեկտի և կրակմարիչի բացակայություն	Ապահովել առաջին բուժօգնության կոմպլեկտի և կրակմարիչի առկայությունը շինհրապարակում	Մասամբ շտկվել է	Մշտապես ստուգել առաջին բուժօգնության կոմպլեկտի և կրակմարիչի առկայությունը շինհրապարակում
7.	Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի (ԱԻԱՊ) պաստառների բացակայություն	ԱԻԱՊ պաստառները պետք է փակցված լինեն	Շտկվել է	Որևէ հետագա գործողություններ չեն պահանջվում

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. Հաշվետու ժամանակաշրջանում աղմուկի, փոշու, ջրի որակի և վիբրացիայի չափումների կարգավիճակ

Չափումների պարամետրեր	Գտնվելու վայր ՊԿ	Համայնք	Հաշվետու ժամանակահատվածում կատարված չափումներ
ՓՈՇԻ			
Փոշի 1	Փարպի ԲԳ	Փարպի	Չի կատարվել
Փոշի 2	32+600	Ոսկեվազ	Չի կատարվել
Փոշի 3	33+700	Ագարակ	Չի կատարվել
Փոշի 4	36+600	Աղձք	Չի կատարվել
Փոշի 5	38+500	Ուջան	Չի կատարվել
Փոշի 6	43+500	Կոշ	Չի կատարվել
Փոշի 7	44+850	Կոշ	Չի կատարվել
Փոշի 8	46+700	Շամիրամ	Չի կատարվել
Փոշի 9	50+800	Արուճ	Այո
Փոշի 10	63+200	Դավթաշեն	Այո
Փոշի 11	69+000	Եղնիկ	Չի կատարվել
Փոշի 12	69+800	Թալին	Չի կատարվել
ԱՂՄՈՒԿ			
Աղմուկ 1	Փարպի ԲԳ	Փարպի	Չի կատարվել
Աղմուկ 2	32+500	Ոսկեվազ	Չի կատարվել
Աղմուկ 3	36+400	Աղձք	Չի կատարվել
Աղմուկ 4	38+400	Ուջան	Չի կատարվել
Աղմուկ 5	43+800	Կոշ	Չի կատարվել
Աղմուկ 6	44+600	Կոշ	Չի կատարվել
Աղմուկ 7	46+400	Շամիրամ	Չի կատարվել
Աղմուկ 8	50+900	Արուճ	Այո
Աղմուկ 9	69+950	Թալին	Չի կատարվել
ՋՈՒՐ			
Ջուր 1	30+500	Փարպի	Չի կատարվել
Ջուր 2	30+700	Փարպի	Չի կատարվել
Ջուր 3	32+800	Ոսկեվազ	Չի կատարվել
Ջուր 4	32+900	Ոսկեվազ	Չի կատարվել
ՎԻԲՐԱՑԻԱ			
Վիբրացիա 1	50+700	Արուճ	Այո

ՀԱՎԵԼՎԱԾ Ե. Բնապահպանական թույլտվությունների և լիցենզիաների կարգավիճակ

Բնապահպանական թույլտվություններ և լիցենզիաներ	Կարգավիճակ	Անվանում/Վայր	Մեկնաբանություն (Իրավասու մարմնի անվանում, լիցենզիայի համար, տրման ամսաթիվ)
Բնապահպանական փորձաքննության եզրակացություն Տրանշ 2 համար	Այո	ՀՀ բնապահպանության և նախարարություն	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն ՊՈԱԿ / 2011թ. հուլիսի 22, EE 62
Բնապահպանական փորձաքննության եզրակացություն Մասիսի բետոնի գործարանի համար	Այո	ՀՀ բնապահպանության և նախարարություն	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն ՊՈԱԿ / 2013թ. օգոստոսի 24, EE 79
Բնապահպանական փորձաքննության եզրակացություն Փարպիի բետոնի գործարանի համար	Այո	ՀՀ բնապահպանության և նախարարություն	Փարպի համայնքի շինարարություն սկսելու վերաբերյալ թույլտվություն No 175, 2013թ. մարտ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության կենտրոն ՊՈԱԿ / 2013թ. մարտի 18, EE 16
Կաքավաձոր բետոնի արտադրման գործարան	Այո	Կաքավաձոր	Կաքավաձոր համայնքի շինարարություն սկսելու վերաբերյալ թույլտվություն No 1, 18.11.2015թ. ՀՀ քաղաքաշինության նախարարություն, Փորձաքննության դրական եզրակացություն No 7/ՊՖ-423, 12.11.2015թ. Մթնոլորտային օդի աղտոտվածության թույլտվություն, No 5/19.3/55158, 25.12.2015թ.
Հանքեր	Այո	«Սթոուն Լենդ» ընկերություն, Բալահովիտ	Կապալառուն գնում է նյութը գոյություն ունեցող հանքից (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, լիցենզիա No 03Ա.075493, 1/09/2012թ.)

	Այո	«Նաիրի ՃՇՇ» ընկերություն, Նոր Գեղի	Կապալառուն գնում է նյութը գոյություն ունեցող հանքից (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, լիցենզիա No 01Ա.000817, 20/10/2012թ.)
	Այո	«Շեն Գրուպ» ՓԲԸ, Մերձավան	Կապալառուն գնում է նյութը գոյություն ունեցող հանքից (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, լիցենզիա No 03Ա.087918, 17/07/2010թ.)
	Այո	«ԱԱԲ Պռոեկտ» ՍՊԸ, Արամուս	Կապալառուն գնում է նյութը գոյություն ունեցող հանքից (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, լիցենզիա No HA-L-14/668, 25/07/2011թ.)
		«Յունիվերսալ» ՍՊԸ Դաշտավան	Կապալառուն գնում է նյութը գոյություն ունեցող հանքից (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, լիցենզիա No HA-L-14/600, 20/11/2009թ.)
Հողի բերրի շերտի կուտակման վայր	Այո	Կաթնաղբյուր-1, Կաթնաղբյուր-2 Կաթնաղբյուր համայնք, Արագածոտնի մարզ	Կաթնաղբյուր համայնքապետի կողմից տրված հողի բերրի շերտի կուտակման ժամանակավոր վայրի մասին թույլտվություն No 66, 17.10.2013թ. Արագածոտնի մարզպետարանի հաստատում No 01/19/3236- 13, 18.10.2013թ.
	Այո	Եղնիկ-1 Եղնիկ-2 Եղնիկ համայնք, Արագածոտնի մարզ	Եղնիկ համայնքապետի կողմից տրված հողի բերրի շերտի կուտակման ժամանակավոր վայրի մասին թույլտվություն, 11.10.2013թ.

		Արագածոտնի մարզպետարանի հաստատում No 01/19/3180-13, 14.10.2013թ. Եղնիկ-2 չի շահագործվում
Այո	Թալին-1 ք.Թալին, Արագածոտնի մարզ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության թույլտվություն, No 01/16.1/7340-14, 27.06.2014թ.
Այո	Ներքին Բազմաբերդ-1, Ներքին Բազմաբերդ-2 Ներքին Բազմաբերդ համայնք, Արագածոտնի մարզ	Ներքին Բազմաբերդ համայնքապետի կողմից տրված հողի բերրի շերտի կուտակման ժամանակավոր վայրի մասին թույլտվություն No 054, 22.11.2013թ. Արագածոտնի մարզպետարանի հաստատում No 01/19/3608-13, 22.11.2013թ.
Այո	Դավթաշեն-3 Դավթաշեն համայնք, Արագածոտնի մարզ	Դավթաշենի համայնքապետի կողմից տրված հողի բերրի շերտի կուտակման ժամանակավոր վայրի մասին թույլտվություն 13.03.2014թ. Արագածոտնի մարզպետարանի հաստատում No 01/19/740-14, 13.03.2014թ.
Այո	Արուճ-1 Արուճ համայնք, Արագածոտնի մարզ	Արուճի համայնքապետի կողմից տրված հողի բերրի շերտի կուտակման ժամանակավոր վայրի մասին թույլտվություն 17.07.2014թ. Արագածոտնի մարզպետարանի հաստատում, 17.07.2014թ.
Այո	Կոշ-3 Կոշ համայնք, Արագածոտնի մարզ	Կոշի համայնքապետի կողմից տրված հողի բերրի շերտի կուտակման ժամանակավոր վայրի մասին թույլտվություն 07.10.2014թ. Արագածոտնի

			մարզպետարանի հաստատում, 06.10.2014թ.
	Ոչ	Շամիրամ-1 Շամիրամ համայնք, Արագածոտնի մարզ	Տեղամասը չի շահագործվել և ՏՇՄԿՊ դեռևս չի մշակվել: Մարզպետարանի հաստատումը չի տրամադրվել:
Հանված նյութի տեղադրման վայր	Այո	Կաթնաղբյուր-3, Կաթնաղբյուր-4, Կաթնաղբյուր-5 Կաթնաղբյուր համայնք, Արագածոտնի մարզ	Կաթնաղբյուրի մարզպետարանի թույլտվություն No 076 , հանված նյութի տեղադրման վայրի մասին, 21.11.2013թ.
	Ոչ	Թալին-2 ք.Թալին Արագածոտնի մարզ	Տեղամասը չի շահագործվել և ՏՇՄԿՊ դեռևս չի մշակվել:
	Այո	Թալին-3, Թալին-3, ք.Թալին Արագածոտնի մարզ	Թալինի մարզպետարանի թույլտվություն հանված հանված նյութի տեղադրման վայրի մասին, No 056 15.06.2016թ.
	Այո	Ներքին Բազմաբերդ-3 Ներքին Բազմաբերդ-4 Ներքին Բազմաբերդ համայնք, Արագածոտնի մարզ	Ներքին Բազմաբերդի մարզպետարանի թույլտվություն հանված նյութի տեղադրման վայրի մասին, No 053 21.11.2013թ.
	Այո	Դավթաշեն-1, Դավթաշեն-2 Դավթաշեն համայնք Արագածոտնի մարզ	Դավթաշենի մարզպետարանի թույլտվություն հանված նյութի տեղադրման վայրի մասին, 02.12.2013թ.
	Այո	Արուճ-2 Արուճ համայնք, Արագածոտնի մարզ	Արուճի մարզպետարանի թույլտվություն հանված նյութի տեղադրման վայրի մասին, No 94 17.07.2014թ.
	Այո	Վերին Սասնաշեն-1, Վերին Սասնաշեն-2 Վերին Սասնաշեն համայնք,	Վերին Սասնաշենի մարզպետարանի թույլտվություն հանված նյութի տեղադրման վայրի մասին, 24.02.2014թ.

		Արագածոտնի մարզ	
	Այո	Կոշ-1, Կոշ-2 Կոշ համայնք, Արագածոտնի մարզ	Կոշի մարզպետարանի թույլտվություն հանված նյութի տեղադրման վայրի մասին, 25.08.2014թ.
	Այո	Շամիրամ-2 Շամիրամ համայնք, Արագածոտնի մարզ	Շամիրամի մարզպետարանի թույլտվություն հանված նյութի տեղադրման վայրի մասին, 07.03.2014թ.
	Այո	Կաքավաձոր-1 Կաքավաձոր համայնք, Արագածոտնի մարզ	Կաքավաձորի մարզպետարանի թույլտվություն հանված նյութի տեղադրման վայրի մասին, No 50 07.04.2014թ.
	Ոչ	Փարպի-1, Փարպի համայնք, Արագածոտնի մարզ	Տեղամասը չի շահագործվել և ՏՇՄԿՊ դեռևս չի մշակվել:

ՀԱՎԵԼՎԱԾ Զ. Աղմուկի, փոշու և վիբրացիայի գնահատման հաշվետվությունից քաղվածքներ

Չափման արդյունքները

Յուրաքանչյուր միավորի չափման արդյունքները ներկայացված են ստուգումների արձանագրության մեջ և ամփոփված են աղմուկի, փոշու և վիբրացիայի համապատասխան արդյունակներում:

Աղմուկի, վիբրացիայի և փոշու գնահատման հաշվետվություն No 10 (2016թ. նոյեմբեր)

Աղյուսակ 6. 15.11.2016թ.-ին «Աղմուկ 8» կետում կատարված աղմուկի չափումների արդյունքները 02.11.2013թ.-ին աղմուկի ելակետային չափումների համեմատությամբ

Չափման ժամերը	Աղմուկի մակարդակը (աղմուկի մակարդակին համարժեք), LAeq, դբ		Աղմուկի սահմանային մակարդակ, LAmax, դբ		Սահմանափակ արժեքի շեմ (աղմուկի մակարդակին համարժեք), դբ	Սահմանափակ արժեքի շեմ (աղմուկի սահմանային մակարդակ), դբ
	փաստացի (15.11.16)	Ելակետային (02.11.13)	փաստացի (15.11.16)	Ելակետային (02.11.13)		
Աղմուկ 8						
1-ին չափում	53.5	60.0	74.5	71.6	60	75
2-րդ չափում	60.0	59.7	78.5	71.5		
3-րդ չափում	57.3	59.4	75.0	71.6		

Աղյուսակ 7. 15.11.2016թ.-ին «Փոշի 9» կետում կատարված փոշու չափումների արդյունքները (PM2.5 և PM10) 02.11.2013թ.-ին փոշու ելակետային չափումների համեմատությամբ

Չափման ժամերը	Փոշու փաստացի կոնցենտրացիաներ, մգ/մ ³		Փոշու թույլատրելի սահմանային կոնցենտրացիա (ԹՄԿ), մգ/մ ³	
	փաստացի (15.11.16)	Ելակետային ¹ (02.11.13)	Միջին օրական	Առավելագույն քանակ
Փոշի 9				

¹ Միայն փոշու կոնցենտրացիան որոշելու նպատակով ելակետային ուսումնասիրության չափումները իրականացվել են 25-26.07.2013թ. և 02.11.2013թ.: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության թիվ 1174-Ն 23.10.2013թ. որոշման համաձայն՝ PM2.5 և PM10 պետք է որոշվի:

1-ին չափում	PM2.5 ²	0.021	0.018	0.035	0.16
	PM10 ³	0.042		0.06	0.3
2-րդ չափում	PM2.5	0.02	0.017	0.035	0.16
	PM10	0.039		0.06	0.3
3-րդ չափում	PM2.5	0.017	0.02	0.035	0.16
	PM10	0.036		0.06	0.3
Միջին արժեք	PM2.5	0.019	0.018	0.035	0.16
	PM10	0.039		0.06	0.3

Աղյուսակ 8. 15.11.2016թ.-ին «Փոշի 10» կետում կատարված փոշու չափումների արդյունքները (PM2.5 և PM10) 25-26.07.2013թ.-ին փոշու ելակետային չափումների համեմատությամբ

Չափման ժամերը	Փոշու փաստացի կոնցենտրացիաներ, մգ/մ ³		Փոշու թույլատրելի սահմանային կոնցենտրացիա (ԹՄԿ), մգ/մ ³		
	փաստացի (15.11.16)	Ելակետային (25-26.07.13)	Միջին օրական	Առավելագույն քանակ	
Փոշի 10					
1-ին չափում	PM2.5	0.009	0.017	0.035	0.16
	PM10	0.019		0.06	0.3
2-րդ չափում	PM2.5	0.01	0.02	0.035	0.16
	PM10	0.019		0.06	0.3
3-րդ չափում	PM2.5	0.008	0.02	0.035	0.16
	PM10	0.017		0.06	0.3
Միջին արժեք	PM2.5	0.011	0.019	0.035	0.16
	PM10	0.018		0.06	0.3

² 2.5սմ չափսի մասնիկներ

³ 10սմ չափսի մասնիկներ

Աղյուսակ 9. 15.11.2016թ.-ին «Վիբրացիա 1» կետում կատարված վիբրացիայի չափումների արդյունքները (վիբրացիայի փաստացի չափումներ) 02.11.2016թ.-ին վիբրացիայի ելակետային չափումների համեմատությամբ

Չափման ժամերը	Վիբրացիայի ազդեցության ենթարկվելու փաստացի արժեքը, մ/վրկ²		Վիբրացիայի ազդեցության ենթարկվելու գործողության արժեքը, մ/վրկ²	Վիբրացիայի ազդեցության ենթարկվելու սահմանային արժեքը (ՎԱՍԱ), մ/վրկ²
	փաստացի (15.11.16)	ելակետային (02.11.13)		
Վիբրացիա 1				
1-ին չափում	0	0	0.5	1.15
2-րդ չափում	0	0		
3-րդ չափում	0	0		
Միջին արժեք	0	0		

Եզրակացություններ

- 60 դբ որպես համարժեքային մակարդակ և 70 դբ աղմուկի սահմանային մակարդակները պետք է կիրառվեն որպես Սահմանափակ արժեքի շեմ (ՄԱՇ)՝ գնահատելու աղմուկի փաստացի մակարդակը չափումների «Աղմուկ 8» կետում (տես Աղյուսակ 3):
- Աղմուկի մակարդակի չափումների արդյունքում, որոնք կատարվել են օրվա տարբեր ժամերին «Աղմուկ 8» կետում 15.11.2016թ.-ին, գրանցվել էր աղմուկի փաստացի համարժեքային մակարդակը եղել է ՄԱՇ-ի սահմաններում (60 դբ), ինչը սահմանված է սանիտարական նորմերով:
- Աղմուկի փաստացի սահմանային մակարդակները նույն կետում ընդհանուր առմամբ եղել է ՄԱՇ-ի սահմաններում (75 դբ), բացառությամբ՝ 14:00-14:10 ժամերին կատարված չափումների, երբ աղմուկի մակարդակը բարձր է եղել ՄԱՇ-ից 3.5 դբ-ով: Բարձր աղմուկի հիմնական պատճառը Մ1 մայրուղու երկայնքով երթևեկող ավտոմեքենաներն են:
- PM2.5 և PM 10 (փոշեհատիկները 2.5um և 10um համապատասխանաբար)

չափումների կատարման «Փոշի 9» և «Փոշի 10» կետերում օրվա տարբերի ժամերին փոշու փաստացի կոնցենտրացիաները չեն գերազանցում օրական միջին և սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները՝ բնակելի տարածքների համար սահմանված «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների նորմերի մասին» ՀՀ Կառավարության №160-Ն որոշման համաձայն:

5. Վիբրացիայի գործիքային չափումների արդյունքների համաձայն՝ «Վիբրացիա 1» չափումները կետի մոտ որևէ վիբրացիա/տատանում չի գրանցվել (Քարավանսարայ հուշարձանի մոտ):

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. ՀՀ մշակույթի նախարարության թույլտվությունը Լանջիկ Հնագիտության
Համալիրի վերաբերյալ, կո՛մ86+000-կո՛մ89+740 և կո՛մ90+900-կո՛մ91+900
ճանապարհահատվածների համար

«ԿՈՐՍԱՆ-ԿՈՐՎԻԱՄ
ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆ» ԲԸ
ՀԱՅԱՍՏԱՆԹԱՆ
ՄԱՍԽԱՑՈՒՂ



“CORSAN-CORVIAM
CONSTRUCCION” S.A.
ARMENIAN BRANCH

Հասցե 22, Աշտարակ, Արևսկյան խճ. 1
Հեռ. (0232) 36 0 11

Address: 1 Highway, Ashtarak, RA
Phone: (0232) 36 0 11

N° CCC/260

«17» հունիս 2015

Ներքին Մասնաշեն համայնքի ղեկավար
պարոն Անդրանիկ Շամոյանին

To: Head of Aruch community
Mr. Andranik Shamoyan

Dear Mr. Shamoyan,

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Hereby we inform you that “Corsan Corviam
Construccion” S.A. Armenian branch plans to make a
deviation road passing through a small section of the
administrative area of your community (mentioned
section on the attached drawing). Please give your
consent for making the deviation road through the
mentioned area.

Մույնով հայտնում ենք Ձեզ, որ «Կորսան
Կորվիամ Կոնստրուկցիոն» ԲԸ Հայաստանյան
մասնաճյուղը պլանավորում է Ձեր համայնքի
վարչական տարածքի մի փոքր հատվածով
անցկացնել շրջանցիկ ճանապարհ (կից գծագրի
վրա նշված հատվածը): Խնդրում ենք Ձեր
համաձայնությունը նշված տարածքով
շրջանցիկ ճանապարհ անցկացնելու
վերաբերյալ:

Հարգանքով
Yours sincerely,

Դանիել Դոմինգո Տաբուենյա
Daniel Domingo Tabucna
Մրագրի Կառավարիչ
Project Manager

Կատարող Prepared by:
Սոս Ամիրխանյան
Sos Amirkhanyan
Սոցիալական հարաբերությունների մասնագետ
Social Relation Specialist
Կից Encl.
Հատվածներ Layout maps





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N _____ " _____ " _____ 2016 թ.

« տրանսպորտի և կապի նախարար
պրն Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ»

Հարգելի պարոն Բեգարյան

Ի պատասխան Ձեր 2016 թ. օգոստոսի 2-ի N 01/27/9914-16 գրության՝ հայտնում ենք, որ նախարարության մասնագետները « ԳԱԱ հնագիտության ինստիտուտի մասնագետների և Ներքին Սասնաշենի Էնեոլիթյան բնակատեղին պեղող արշավախմբի ղեկավարի հետ համատեղ տեղում ուսումնասիրել և քննարկել են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) տրանշ 2-ի Աշտարակ-Թալին ԿՄ59+000–ԿՄ59+220 ճանապարհահատվածում շրջանցիկ ճանապարհների կառուցման խնդիրը:

Լկատի ունենալով, որ Աշտարակ-Թալին ճանապարհի ԿՄ59+000–ԿՄ59+220 հատվածի ձախակողմյան մասում պատմամշակութային հուշարձաններ չկան, նախարարությունը չի առարկում այդ տարածքում շրջանցիկ ճանապարհի իրականացմանը:

Ընչ վերաբերում է ճանապարհի հիշյալ հատվածի աջակողմյան մասում շրջանցիկ ճանապարհի շինարարությանը՝ քնդումելի է համարվել Ծրագրի խորհրդատուի և Ներքին Սասնաշենի հնագիտական համալիրը պեղող արշավախմբի ղեկավար Հ. Սիմոնյանի՝ շրջանցիկ ճանապարհի լայնությամբ վերին շերտը մանրահատիկ խճով պատելու և անհրաժեշտ լիցքի կատարման վերաբերյալ առաջարկությունը՝ պայմանով, որ կապալառուն շինարարական աշխատանքների ավարտից հետո կապահովի հողի լիցքի և մանրահատիկ խճի հեռացման աշխատանքները, միաժամանակ, գործընթացի կատարման ժամանակ՝ հնագետի ներկայությունը:

Տեղեկացնում ենք նաև, որ ուսումնասիրվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի տրանշ 3-ի Թալին-Գյումրի ավտոճանապարհի Լանջիկ համայնքի հատվածում իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների ընթացքում հնագիտական հուշարձանների պահպանության հարցը:

Նկատի ունենալով այն փաստը, որ ճանապարհի հիշյալ հատվածի ազդեցության գոտում արձանագրված են հնագիտական հուշարձաններ (ամրոց, դիտաշտարակներ, հնագույն կառույցների պատեր, բնակատեղի դամբարաններ), որոնք կարող են վնասվել կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը կապալառոփն՝ ապահովելու հնագեոթի մշտական հսկողությունը աշխատանքների ընթացքին:

Հարգանքով՝

Ժամանակավոր պաշտոնակատար՝

Ն. ՏԵՐ-ՎԱՐԴԴԱՆՅԱՆ



ՊՄՀ-ի գործակալություն
Նախ՝ Ս Հարսրյան
Հեռ.՝ (010) 56.51.18

ՀԱՎԵԼՎԱԾ Ը. Հետշինարարական բնապահպանական աուդիտի ստուգաթերթիկ
Տրանշ 1-ի համար

No.	Աշխատանք	Ազդեցություններ	Առաջարկվող միջոցառում/ միջոցառումներ	Ստուգում	Իրականացված միջոցառումներ
1	Շինհրապարակում բուսական շերտի վերականգնում (բուսականության վերականգնում)	Բուսական շերտի փոփոխություն, շինարարության արդյունքում առաջացած էրոզիա	Տնկադաշտի և բուսականության վերականգնման միջոցառումներ (ծառեր, խոտ և այլն)	Չի կատարվել	Ազդեցություններ չկան
			Պատշաճ կանաչապատում և ջրահեռացում	Չի կատարվել	Ազդեցություններ չկան
2	Հողի բերրի շերտի կառավարում	Հողի էրոզիա	Հողի հանված բերրի շերտի պահում և կառավարում՝ կանաչապատման աշխատանքներում կրկին օգտագործելու նպատակով	Չի կատարվել	
3	Նավթի կառավարում	Մեքենասարքավորումների վերանորոգում	Խուսափել նավթը թափելուց, որպեսզի հողը չբացվի: Վերանորոգման աշխատանքները պետք է իրականացվեն բետոնե մակերեսով տարածքում:	Այո	Նավթ չի թափվել
4	Հանված նյութի տեղադրման վայրի կառավարում	Հանված նյութի կուտակում, օդի և հողի աղտոտում	Բոլոր տեսակի հանված նյութերի տեղադրման վայր, ներառյալ շինարարական աղբի համար հատկացված վայր	Այո	Շինարարական բոլոր տեսակի հանված նյութերը, այդ թվում՝ 08.07.2016թ.-ին աուդիտի շինհրապարակ այցելության ժամանակ հայտնաբերված մնացորդները տեղափոխվել են լցակայաններ

					 A photograph showing a concrete drainage structure, possibly a curb or a small channel, built into a dirt embankment. The structure is light gray and has a sloped top surface. To the left of the structure is a gravelly area with sparse green and brown vegetation. Below the embankment, a paved road curves through a similar landscape of dirt and sparse vegetation. The overall scene appears to be a construction or maintenance site in a rural or undeveloped area.
--	--	--	--	--	--

					
--	--	--	--	--	---

			Հանված նյութերի տեղադրման վայրերը վերականգնվել են և պաշտոնապես հանձնվել են տեղական համայնքներին	Այո	Աշտարակի հողի բերրի շերտի կուտակման վայրը փակ է և հանձնվել է Աշտարակի քաղաքապետարանին 30.04.2015թ.-ին հանձնման-ընդունման ակտի միջոցով: Մասիսի հողի բերրի շերտի կուտակման վայրը փակ է և հանձնվել է Մասիսի քաղաքապետարանին 30.10.2015թ.-ին հանձնման-ընդունման ակտի միջոցով: Թերությունների վերացման ժամանակաշրջանի ընթացքում կօգտագործվի Աշտարակ-2 բերրի հողի կուտակման վայրը և փակ կլինի մինչև ծրագրի ավարտը:
5	Աղմուկի, վիբրացիայի և օդի կառավարում	Նոր ճանապարհի պատճառով նորմայից բարձր աղմուկ և վիբրացիա	Աղմուկի մոնիթորինգ կատարվում է պարբերաբար և ի պատասխան ցանկացած բողոքի	Չի կատարվել	Հետշինարարական ժամանակահատվածի ընթացքում որևէ բողոք ազդեցության ենթակա անձանց կողմից չի գրանցվել
6	Օդի կառավարում	Նոր ճանապարհի պատճառով օդի որակի վատթարացում	Օդի որակի մոնիթորինգ կատարվում է պարբերաբար կապված մեքենաների արտանետումների հետ և ի պատասխան ցանկացած բողոքի	Չի կատարվել	Հետշինարարական ժամանակահատվածի ընթացքում որևէ բողոք ազդեցության ենթակա անձանց կողմից չի գրանցվել
7	Երթևեկության կառավարում	Երթևեկության հետ կապված ռիսկեր և անվտանգության խնդիրներ	Բնակարանային, խանութների, գործարար և հասարակական գործունեության ազատ մուտք և հասանելիություն	Այո	Բոլոր մուտքերը ազատ են: Որևէ բողոք ազդեցության ենթակա անձանց կողմից չի գրանցվել
			Տեղադրված են համապատասխան ճանապարհային նշաններ	Այո	Ճանապարհային ուստիկանությունը հաստատել է ճանապարհային նշանները և դրանց պատշաճ տեղադրումը
8	Ճանապարհի վերականգնում	Ճանապարհի վնասվածքներ, որոնք կարող են աղտոտման, երթևեկության խախտման և դժբախտ ավտովթարների պատճառ հանդիսանալ	Ներդրված ճանապարհացանցով փողոցները վերականգնվել են իրենց մինչ շինարարությունը առկա կամ ավելի լավ պայմանների	Այո	Գոյություն ունեցող ամբողջ ճանապարհացանցը փոխարինվել է, և ներդրվել է նոր ճանապարհացանց ըստ նախագծի
			Ըստ անհրաժեշտության, ծառերը վերատնկվել են	Չի կատարվել	
			Ճանապարհի իջատեղերը/մուտքերը վերականգնվել են իրենց մինչ շինարարությունը առկա կամ ավելի լավ պայմանների	Այո	Ճանապարհի մուտքերը ազատ են ճանապարհի երկայնքով գտնվող բոլոր բնակավայրերի և գործարար կետերի համար
9	Հանված հողի տեղադրման վայրեր և հանքեր	Մոդանք, հողի էրոզիա, գետի հունի և լանդշաֆտի փոփոխություն, դժբախտ ավտովթարներ	Հանված հողի տեղադրման վայրերը և հանքերը վերականգնվել են	Այո	Տրանշ 1 համար օգտագործվող հանված հողի տեղադրման երկու վայրերը Դաշտաքար և Ջրահովիտ տեղամասեր, փակ էին, պատշաճ կերպով վերականգնվել են և 2014թ. հունիսի 4-ին հանձնվել են տեղական համայնքներին: Հանձնման-ընդունման գործընթացը պատշաճ կերպով արձանագրվել է և ծանուցվել է Ինժեներին: Հակառակ դեպքում

					Կապալառուն նյութերը պետք է ձեռք բերի գոյություն ունեցող հանքերից համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով:
10	Գոյություն ունեցող ենթակառուցվածքների ծառայություններ	Գոյություն ունեցող ծառայություններին վնասի հասցնում կամ աշխատանքի խախտում (էլեկտրականության, ջրի, գազի, հաղորդակցման մատակարարում և այլն)	Մինչ շինարարությունը առկա պայմանների վերականգնում կամ պատշաճ տեղափոխում՝ հաստատված ծառայություններ տրամադրող ընկերությունների կողմից	Այո	Գոյություն ունեցող ենթակառուցվածքը վերականգնվել է իր նախկին մինչ շինարարություն սկսելը առկա պայմաններին և/կամ պատշաճ կերպով տեղափոխվել է: Ձեռք է բերվել ծառայություններ տրամադրող ընկերությունների բանավոր գոհունակությունը և որևէ բողոք չի ստացվել:
11	Շինարարության տեղամասի սարքավորումներ	Շրջակա միջավայրի մնացորդային աղտոտում և անհարմարությունների պատճառում բնակավայրերին	Բոլոր ժամանակավոր/դաշտային օգտագործման գործարանները (ասֆալտի, բետոնի, քարերի մանրացման և այլն) արդեն ապամոնտաժվել և հանվել են:	Այո	Մասիսի բետոնի գործարանը փակ է և ապամոնտաժված է: Վարձակալված տարածքի սեփականատիրոջ հետ կնքվել է հանձնման-ընդունման ակտ 31.08.2016թ.-ին: Փարպի բետոնի գործարանը կշահագործվի Տրանշ 2 համար:
			Մշտապես աշխատող գործարանները (ասֆալտի, բետոնի, քարերի մանրացման և այլն) պատշաճ կերպով մաքրվել են և փակվել/ հանձնվել են:	Այո	Կապալառուն օգտվել է Սասունիկում մշտապես գործող ասֆալտի ֆրեզավորման գործարանից («Սթոնս» ՍՊԸ) համաձայն կնքված պայմանագրի: Ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է 4.02.2013թ.-ին: Կապալառուն շարունակում է օգտվել գործարանից Տրանշ 2 համար:
			Բոլոր ժամանակավոր օգտագործման սարքավորումները հեռացվել են և տարածքը մաքրվել է:	Չի կատարվել	Կապալառուն չի հիմնել շինարարական տեղամասեր կամ որևէ այլ ժամանակավոր հարմարություններ Տրանշ 1 աշխատանքների համար:
12	Հնագիտական/պատմական տեղամասեր	Կործանիչ ազդեցություն մշակութային հուշարձանների և հնագիտական արտեֆակտների վրա	Բոլոր անհրաժեշտ պեղումները ավարտվել են և հաստատվել են ՀՀ մշակույթի նախարարության կողմից: Մշակութային հուշարձանների վրա որևէ հետշինարարական ազդեցություն չի գրանցվել	Չի կատարվել	Տրանշ 1 աշխատանքների շրջանակներում որևէ հնագիտական խնդիր չի առաջացել:
13	Բողոքների մեխանիզմ (ԲԼՄ)	Ազդեցության ենթակա անձանց կողմից ներկայացված լուծում չստացած բողոքներ	Բոլոր բողոքները լուծվել են և ազդեցության ենթակա անձինք գոհ են եղել արդյունքներից	Այո	Պայմանագրերի գործողության ընթացքում ստացված բոլոր բողոքները պատշաճ կերպով հասցեագրվել և լուծվել են: Բնապահպանական խնդիրների հետ կապված որևէ բողոք չի գրանցվել: Բողոքները հիմնականում վերաբերել են ճանապարհի իջատեղերին/մուտքերին, ոռոգման ջրի ջրանցքներին և ուղեանցերին, մասնավորապես, ներկայացվել են ստորև նշված բողոքները/խնդրանքները. Մարմարաշենի և Բուրաստանի բնակիչները խնդրել են ապահովել գյուղատնտեսական մեքենասարքավորումների համար ուղեանց, խնդրանքը բավարարվել է և ներկայումս ուղեանցը կառուցվում է: Աշտարակի քաղաքապետարանը պահանջել է Մուղնիի կամրջի շինարարության ընթացքում ապահովել այլընտրանքային շրջանցիկ ճանապարհ, ինչը բավարարվել է: Փարպիի համայնքապետը և Աշտարակի քաղաքապետը նշել են, որ

				<p>պահանջվում է ոռոգման ջրի խողովակաշար, ինչը նախատեսված չի եղել նախագծում, և ճանապարհի տակով նոր խողովակաշարի անկացման անհրաժեշտությունը եղել է: Խնդրանքը բավարարվել է: Այնթափի գյուղապետը խնդրել է ասֆալտապատել դեպի բնակելի տներ տանող իջատեղերը/մուտքերը: Նախագիծը վերանայվել է, և խնդրանքը բավարարվել է:</p> <p>Բավարարվել են նաև մի շարք բանավոր ներկայացված բողոքներ կապված ճանապարհի ժամանավոր իջատեղերի/մուտքերի և ոռոգման ջրի ջրանցքների հետ.</p> <p>Տրանշ 1 շինարարության ավարտին չի եղել որևէ չլուծված բողոք: Հետշինարարական ժամանակաշրջանում որևէ բողոք չի ներկայացվել:</p>
--	--	--	--	--